



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒԹ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Դ.

6 ՅՈՒՆԻՍ 1875



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1875

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան Արարանեան	ժաշար	Ա. ԱՅԵՆԱԳՅԵ
Ռուսինեան	էֆէնտի	Բ. »
Քրիստոսաուր Ղազարոսեան	»	Գ. »
Համբարձում Ս. Ալանաճեան	»	Ա. ԱՅԵՆԱԳՅԵ
Գարեգին Մելիքեան	»	Բ. »
Պօղոս Պառնասեան	»	Գ. »

ՉԵՌՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Խորէն Եպիսկոպոս Նար-Պէյ		ԱՅԵՆԱԳՅԵ
Տ. Յովաննէս Բ. Միրեան		
Նիկողոս Ալանաճեան	էֆէնտի	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան Եսառֆեան	էֆէնտի	
Գէորգ Ստեփանաճեան	»	
Ռուբէն Կիւմիւշկերտանեան	»	

ԿԱԼՈՒԱՄՈՅ ԴԻԻԱՆ

Քրիստոսաուր Ղազարոսեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳՅԵ
Յովաննէս Ազնաւուրեան	»	
Բարսեղ Հալաճեան	»	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովաննէս Իսահան	էֆէնտի	
Ստեփան Պէլլիկեան	»	
Արմին Միքայէլեան	»	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Առաքել Ալթուն Տիւրքի	էֆէնտի	
Տիգրան Կիւմիւշկերտանեան	»	
Օգոսէն Խոճասարեան	»	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Մատթէոս Վ. Իզմիրլեան		ԱՅԵՆԱԳՅԵ
Տ. Գրիգոր Բ. Աճէմեան		
Սենեքերիմ Մանուկեան	էֆէնտի	

ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Շահապեան	էֆէնտի	
Յովսէփ Մազլումեան	»	
Ստեփան Փափաղեանց	»	

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խաչատուր Միսաքեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳՅԵ
Կարապետ Իւթիւճեան	»	
Յարութիւն Ալեքէմ-Գուլի	»	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Դ.

6 ՅՈՒՆԻՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Գրիգոր Աբրեպիակ. Բ. 2
2. Խորէն & Նար Պէյ Բ. Պ
3. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց Բ. Պ
4. Գարեգին & Թաթարեան Բ. Պ
5. Խորէն & Կիրայեանց Բ.
6. Կարապետ & Սերոբեան Բ.
7. Հմայեակ & Իմամբաճեան Բ. Պ
8. Մատթէոս & Իզմիրլեանց Բ.
9. Յովհաննէս & Փափաղեան Բ.
10. Ներսէս & Ասլանեան Բ.
11. Արիստակէս Բ. Պ
12. Գէորգ & Արծրունի Բ. Պ
13. Գրիգոր & Աճէմեան Բ.
14. Խորէն & Փէշիվանեան Բ.
15. Յարութիւն & Սերովբեան Բ.
16. Յովհաննէս & Մկրեան Բ.
17. Սուքիաս & Ստեփաննոսեան Բ.
- 18.
- 19.
- 20.

ԱՏԵՆԱԶՆԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գրականութիւն, Կիտիկ փաշա եւ

Գրականութիւնի դռնը

21. Բարթող Բիւրճիպաշեան Բ.

- Բ. Բացակայութիւն առաջին :
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
- Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառաւ :
- Հր. Հրատարեալ :

22. Գէորգ Ստեփանաճեան Բ.
23. Գրիգոր Պէրպեղեան Բ.
24. Եսայի Անուիեան Բ. Պ
25. Մանուկ Արապեան Բ. Պ
26. Յակոբ Յրէնկեան Բ.
27. Պետրոս Քերէսթէճեան Բ.
28. Պօղոս Ժամակոչեան Բ.
29. Պօղոս ձիւճեան Բ.
30. Պօղոս Պառնասեան Բ.
31. Ռուսինեան Բ.
32. Սենեքերիմ Մանուկեան Բ.
- 33.
- 34.
- 35.
- 36.

(Բ. Վիճակ)

Պէշիվաշ

37. Բարսեղ Հալաճեան Բ.
38. Կարապետ Ս. Իւթիւճեան Բ.
39. Յարութիւն Մարգարեան Բ.
- 40.

Եկեղիզայիտ

41. Խաչատուր Ղազարոսեան Բ.
42. Կարապետ Գ. Փափաղեան Բ. Պ
43. Համբարձում Իփէկեան Բ.
44. Մարութիւն Յրէնկեան Բ.

Խաչատուր Ս. Խաչ

45. Յովհաննէս Շահեան Բ. Պ
46. Յովսէփ Ս. Մազլումեան Բ. Պ
47. Սերոբէ Պառնասեան Բ.
48. Ստեփան Ասլանեան Բ.

Խաչատուր Ս. Կարապետ

49. Միհրան Պաշտեմաճեան Բ. Պ
50. Յովհաննէս ձիւճեան Բ. 2
51. Նիկողոս Ալանաճեան Բ. Պ
52. Տրդատ Փափաղեան Բ. Պ

(Գ. Վիճակ)

Բերս

53. Արիկ Ունճեան Բ. 2
54. Գրիգոր Սէլիմիճեան Բ. 2
55. Մարտիրոս Յ. Տիւրքեան Բ.
56. Միքայէլ Մամիկոնեան Բ. 2
57. Նշան Փաղաղեան Բ. 2
58. Ստեփան Խոչիբեան Բ. 2
59. Տէլեմաք Մ. Էրսէրճեան Բ. Պ
- 60.
- 61.

Գաւառի փաշա

- 62.
- 63.
64. Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ
65. Յակոբ Կոստանդեան Բ. 2
66. Յովհաննէս Աղայեկեան Բ.
67. Տիգրան Եսառֆեան Բ.

Պէշիվաշ եւ Ղալաթիա

68. Յարութիւն Մէրեմ-Գուլի Բ.

(Գ. Վիճակ)

Գրականութիւն եւ Խաչատուր

69. Յովհաննէս Իսահան Բ.
70. Ստեփան Պէշիվաճեան Բ.

Գրատրգիկոյ

71. Կարապետ Շահապետեան Բ. Պ

72. Մկրտիչ Մուրադեան Բ.

Կարլլըզափոս

73. Յակոբ Եւսէնիճեան Բ.

Ենիմանալի Մամաթիոյ

74. Օգոսէն Խօճատարեան Բ.

Թօփգափոս

75.

Էջրույ Ս. Եղիաւ եւ Ս. Աստուածածին

76. Գարեգին Յ. Մելիքեան Բ. Պ

Գոռնուշեքի

77. Ասափա Իկիտպաշեան Բ. Պ

Հիւար եւ Պօրաճի գիւղ

78.

Կոր գիւղ եւ Ս. Թեմիս

79. Ղազար Հովուեան

Պաշաւ

80. Ասատուր Գուշատաշեան

81. Մկրտիչ Գ. Էսաեան Բ. Պ

82. Յովհաննէս Կրճիկեան

Քարանկիօնիօն

83. Յարութիւն Զէնճիրճեան

84. Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ

(Ե. Վիճակ)

Մամաթիս

85. Աւետիս Քօլըշեան

86. Եղիազար Մելիքեան Բ.

87. Յակոբ Քաղապետեան Բ.

88. Նազարէթ Շահապետեան Բ.

89.

90.

91.

92.

93.

94.

Խաւարիկոյ

95. Առաքել Ալթուն Տերբեր Բ.

96. Խաչատուր Պ. Մխաթեան

97. Ռէթէոս Պէլլիկեան Բ.

98. Սարգիս Արապեան

99. Սիմոն Միքայիլեան Բ. 2

100.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԻՔ

Կարիկ

104. Մանուկ Աւանեան Բ.

Քիօթանեան

102.

Աղբիւրապետ

105. Իսաբէն Կիւմրիկեան

Ենիմանալի

104. Տերբեր Կիւմրիկեան Բ. 2

Ան

105. Պետրոս Մխաթեան

Ղարանխար

106.

Արաքիւր

107. Կարապետ Խաչիկեան

Բաղիշ

108.

Պրոսպ

109. Բրիտանոսուր Ղազարեան

Եղիպիս

110. Մելքոն Հալաճեան

Ասափա

111. Համբարձում Ալաճաճեան

Բարոս

112. Յովհաննէս Ալաւուրեան

Եղիպիս

113.

Մաննըլլի

114.

Համբ

115.

Երզնկա եւ Բարեղոյ

116.

Թեքիրտաղ

117. Տերբեր Գ. Սիմոնեան

Կնարիս

118. Մատթէոս Մ. Ալաւուրեան Բ. Պ

Խալիքի

119. Յովհաննէս Եղիպեան

Պաշաքիս

120. Յովհաննէս Յովակիմեան

Մոռ

121. Սահպան Պ. Պ. Փափազեանց

Տիփլի

122. Պօղոս Մովսէլեան

Զեյթուն եւ Մարաշ

125.

Տրապիզոն

124. Մկրտիչ Կիւմրեան Բ. 2

Պարտաւ

125.

Տիգրանակերտ

126. Թադէոս Թեքեան Բ.

Վան

127. Սիմոն Մաքսուտեան Բ.

Աղթամար

128.

Հայկա եւ Այնթապ

129.

Սեբաստիա

150.

Սոսանոյ

151.

Կարս

152. Արթուր Յ. Ալաւուրեան Բ.

Զմիշտաղ

155. Համբարձում Սարգիսեան

Գոռնափոս

154.

Ատանա

155. Սիմոն Պ. Նորատուկեան

Սըղեղոյ

156. Մատթէոս Ալաւուրեան Բ.

Խօղատ

157.

Մարաթիս

158.

Իզմիր

159.

Եգիպտոս

140.

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Տեղեկագիր իրաւաստութեան դիւանի՝ ի վերայ պատճառաբանալ հրատարակելու Կիւմրիկի Այլաւեան :

Բ. Տեղեկագիր Յարաքերութեան դիւանի՝ ի վերայ աղերսագրոյ Տ. Գարեգին վարդապետի Սրբապատեանց :

Գ. Տեղեկագիր Գաստիրապետութեան եւ Կարոսաճոց դիւանոց՝ ի վերայ Մարտիան վարժարանին փարիզոս :

Դ. Տեղեկագիր Նախնական դիւանի՝ ի վերայ առաջարկութեանց Մարգարեան, Կրճիկեան Խիթիանեան եւ այլ Կիւմրիկեան :

Ե. Փոփոխելի տրամադրութեան Մանմանադրութեան. — վերաբերել յանձնաժողովոյ ծրագիրը :

Զ. Տեղեկագիր Կարոսաճոց դիւանի՝ ազգային վարժարանի համարաւորութեան վերաբերելու :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենապետ փաշան ատենը բացաւ ժամն 7 1/2 ին, ի ներկայութեան 38 երեսփոխանաց, որոց վերջին թիւը 45 ի հասաւ :

Ճ.

Ատենապետ փաշան նախընթաց նստի ատենագրութեան վրայ ի զիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները. սակայն զիտողութիւն ընող չըլլալով ատենագրութիւնը քուէի դըրուելէ ետեւ միաձայնութեամբ ընտրուեցին :

Զ.

Ատենապետ փաշան ճամբորդութեան եւ հիւանդութեան պատճառաւ բացակայ գտնուող երեսփոխանաց անունները ծանոյց ժողովին, որք են

- ճամբորդութեան պատճառաւ բացակայք. Տ. Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեան Միհրան Էֆէնտի Պահճէգարուլեան Հիւանդութեան պատճառաւ բացակայք. Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար Պէյ Տ. Հայկակ վարդապետ Գիմաքսեան Յարութիւն Պէյ Տատեան Կարապետ Էֆէնտի Շահապետեան Յովսէփ » Մաղլմեան Ասապա » Իկիտպաշեան Գարեգին » Մելիքեան Տրդատ » Փափազեան

Յ.

Հր-ձ-բ-լ-ն

Ատենապետ փաշան ծանուցանելով թէ նորընտիր Նախաքննիչ զիւաններէն Խմբագրութեան զիւանին անդամ Մէրեթ-գուլի Էֆէնտին հրատարական մատուցած է, հրատարակելու կարգալէ ետեւ, իրրեւ պարզ հրատարական այն ինչ քուէի դնելու պատրաստուեցաւ, Ատենագիր Էֆէնտին յիշեցուց թէ Նախաքննիչ զիւանաց անդամոց հրատարականները չընդունուի որոշուած է արդէն :

Մէրեթ-գուլի Էֆէնտին ալ յաւելցուց թէ այն հրատարականն որ պատճառաբանալ չէ, անմիջապէս ընդունելի ըլլալու համար ալ որոշուած եղած է :

Ուրիշ զիտողութիւն ընող չըլլալով, Մէրեթ-գուլի Էֆէնտին հրատարականը քուէի դրուեցաւ, զոր ՁԸՆԴՈՒՆԵՑ Ժողովը :

Ատենապետ փաշան յայտնեց Մէրեթ-գուլի Էֆէնտին թէ ժողովին սոյն կրկին վստահութեան քուէին առջեւ վայել է իւր հրատարականն ետ կոչել, եւ ընդունիլ իւր պատճառը :

Տեղեկագիր Երեւանի ընտրութեան մասին վարչութեան Քաղ. ժողովին հասած մէկ տեղեկագիրը կարգացուեցաւ, որոյ պատճէնն է :

Վսեմաշուք Ատենապետ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ .

Մայր եկեղեցւոյ , Կէտիկ փաշայի եւ Գուռ-գափուշի զբոսի միացեալ թաղից առաջին վի-ճակաւ դադարեալ 17 երեսփոխանաց տեղ նո-րոգ ընտրութիւն կատարելով Ընտրողական Ժո-ղովն իւր տեղեկագրով կը յայտնէ թէ միաց-եալ թաղից 550 ընտրողներէն 110 ին մասնա-կցութեամբ եւ քուէից բացարձակ առաւելու-թեամբ երեսփոխան ընտրուած են ,

- | | | |
|-----------------|---------------|--------|
| 1. Ապրօ | Սահակ | էֆէնտի |
| 2. Աղաբեկեան | Սարգիս | » |
| 3. Սուրէնեան | Յովհաննէս | » |
| 4. Խօրասանճեան | Յովհաննէս | » |
| 5. Ստիմարածեան | Գէորգ | » |
| 6. Մանուկեան | Սենեքերիմ | » |
| 7. Քէրէստէճեան | Պետրոս | » |
| 8. Պառնասեան | Պօղոս | » |
| 9. Ռուսինեան | | » |
| 10. Պօյաճեան | Յովհաննէս | » |
| 11. Տօքթոր | Փէշտրմալճեան | » |
| 12. Մանկասարեան | Խաչիկ | » |
| 13. Աղարտմաճեան | Կարապետ | » |
| 14. Պէրպէրեան | Գրիգոր | » |
| 15. Մազպուլեան | Համբարձում | » |
| 16. Տօքթոր | Ն. Մէզպուրեան | » |
| 17. Գափամաճեան | Մինաս | » |

Քաղաքական Ժողովս սոյն ընտրութեանց օրի-նաւորութիւնը Գործադիր Յանձնաժողովոյ քըն-նութեամբ ստուգելէ ետեւ կը հաստատէ , եւ ընտրելոց յանձնառութիւնն ալ ապահովուած ըլլալը յայտնելով ներկայ տեղեկագիրս կը մա-տուցանէ պատկառելի Ժողովոյ ի վաւերացումն :

4 Յունիս 1875

Ի զիմաց Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ

Առէն-Գղէր Էմմ. Առէն-Պէրէր
Մ. ԲԱՄԻԿՈՆԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ Գ. ԲԱՐԱՋԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս տեղեկագրին վրայ կը տեսնեմ որ զիտողութիւն ընող չկայ . ուստի ես ունիմ զիտողութիւն մը զոր Ժողո-վին ուշադրութեանը կը յանձնեմ : Սահմանա-դրութիւնը կը պահանջէ որ ընտրողական Ժողո-վոց տեղեկագրերը յատենի աստ կարգացուն . միայն թէ ընտրելոց հպատակութեան եւ ուրիշ ընտրելութեան պայմանաց վերաբերեալ ծանօ-

թագիր մ'ալ պէտք է զոր Վարչութիւնը պէտք է բերէ Ընտրող. Ժողովոց տեղեկագրիներուն հետ : Այս կարգացուածն ընտրողական Ժողովոց տեղե-կագիրն է . այլ Քաղ. Ժողովին տեղեկագիրն է , յորում գործադիր յանձնաժողովէն առնուով կատարուած ընտրութեանց օրինաւոր ըլլալը կը յայտնէ . երեսփոխանութիւնն ալ Քաղ. Ժո-ղովէն առնելով օրինաւոր է պիտի ըսէ եւ վա-ւերացնէ . բայց կրնայ ըլլալ որ գործադիր յանձնաժողովը ինչպէս նաեւ Քաղ. Ժողովն սը-խալին , որոց հետեւելով Ազգային Ժողովն ալ սխալի . ասոր համար կառաջարկեմ որ ասկէ ետեւ երեսփոխանական ընտրութիւն կատար-ուած ատեն ընտրողական Ժողովոց տեղեկագիրն ուղղակի աստ բերուի , հանդերձ գործադիր յանձնաժողովոյ կարծեօք զոր Պատրիարքը կ'առնէ կատարուած ընտրութեանց գործողու-թեանց վրայ եւ անոր վրայ կ'աւելցունէ՝ ընտ-րելոց հանգամանաց վրայ իր ըրած պաշտօնա-կան խուզարկութեանց արդիւնքը : Ասոնց ա-մէնը յատենի աստ կարգացուելով , Ժողովը կը վճռէ թէ ընտրութիւնք օրինաւոր են կամ չեն :

ՄԵՐԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Կարծեմ , թէ այդ տեղեկագիրը Ժողովոյս Կանոնադրութեան ող-ւոյն համաձայն բերուած է հոս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես չեմ կարծեր որ Ազգ. Ժողովոյ ունեցած իշխանութիւնը Քաղ. Ժողովոյ կրնայ անցնիլ . այլսարհիս մէջ զանա-զան տէրութեանց եւ ազգաց մէջ որքան երես-փոխանական ընտրութիւններ կ'ըլլան , ամե-նուն ալ տեղեկագրերը երեսփոխանաց Ժողովին կուգան կը կարգացունին : Կանոնադրութեան Յ. գ յօդուածին մէջ բացայայտ գրուած է այս-կէտը . « Ընտրութեանց տե-ղեկագիրներն՝ որ նախագահ Սրբազանին ուղ-ղեալ են ընտրող Ժողովներէն , ապահովու-թեան ծանօթագրով մը իւր Սրբազանութեան կողմէն Դիւանին կաւանդուին » : Ճիշդ իմ ը-սածիս պէս է . Վարչութեան կողմէ ապահո-վագիր եւ գործադիր յանձնաժողովին կողմէ կարծիք մը միայն պէտք է . Բայց ըստ որում այս տեղեկագրով ծանուցուած ընտրութիւններն իմ զիտողութենէս առաջ կատարուած են , եւ այնպէս՝ ինչպէս որ մէկ քանի տարիներէ ի վեր բազում ընտրութիւնք կատարուած են . եւ ըստ որում Ազգային Ժողովն այս շրջանի սկիզ-բը մեծ կարօտութիւն ունի ժամ յառաջ ամ-բողջանալու , կ'առաջարկեմ որ այս անգամի

ընտրութիւնն ալ , ինչպէս ասկէ առջինները , բայց իրրեւ վերջն շարքով կանոնական վաւերացման օրինաց , սոյն տեղեկագրին վրայ վաւերացման քուէի ենթարկուին , եւ ասկէ ետքի ընտրութեանց ժամանակ իմ զիտողու-թեանս համաձայն , եթէ զիտողութիւնս Ժողո-վէն ընդունելի դատուի , վարուի Պատրիարքա-րանն եւ Ազգ. Ժողովը :

Հետեւապէս , քուէի զրուելով Ատենապե-տին զիտողութիւնն ու տեղեկագիրը՝ երկուքն ալ ընդունուեցան եւ երեսփոխան հռչակուեցան :

- | | | |
|-----------------|---------------|-------|
| 1. Ապրօ | Սահակ | էֆէն. |
| 2. Աղաբեկեան | Սարգիս | » |
| 3. Սուրէնեան | Յովհաննէս | » |
| 4. Խօրասանճեան | Յովհաննէս | » |
| 5. Ստիմարածեան | Գէորգ | » |
| 6. Մանուկեան | Սենեքերիմ | » |
| 7. Քէրէստէճեան | Պետրոս | » |
| 8. Պառնասեան | Պօղոս | » |
| 9. Ռուսինեան | | » |
| 10. Պօյաճեան | Յովհաննէս | » |
| 11. Տօքթոր | Փէշտրմալճեան | » |
| 12. Մանկասարեան | Խաչիկ | » |
| 13. Աղարտմաճեան | Կարապետ | » |
| 14. Պէրպէրեան | Գրիգոր | » |
| 15. Մազպուլեան | Համբարձում | » |
| 16. Տօքթոր | Ն. Մէզպուրեան | » |
| 17. Գափամաճեան | Մինաս | » |

ՄԵՐԵՏԵՄԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Եթէ կը ներէք , Ատենապետ փաշայ , անգամ մ'ալ կրկնեցէք . այսուհետեւ ընտրութեանց տեղեկագիրներն ինչպէս պիտի գան հոս . չի կրցի լաւ հասկը-նալ այդ կէտը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս որ Կանոնա-դրութեան յօդուածը՝ զոր հիմա կարդացի , կը տրամադրէ , պէտք է որ ընտրող Ժողովոց տե-ղեկագիրն ուղղակի Վարչութեան երթայ , ան ալ ընտրելոց քաղաքական հանգամանքն որոշէ եւ ապահովցնէ իւր զրով . այնուհետեւ ընտ-րութեան տեղեկագիրը կուգայ այս Ժողովին՝ Վարչութեան ապահովագրոյն հետ . Ժողովս ե-թէ ընտրութիւնն օրինաւոր գտնէ , կ'ընդունի , եթէ ոչ՝ կը մերժէ :

ԻԽԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՅ. — Գործադիր Յանձ-նաժողովն ինչ պաշտօն ունի ասոր մէջ : ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գործադիր Յանձնա-

Ժողովն իւր կարծիքը միայն կը յայտնէ . չկըր-նար ըսել թէ ընտրութիւնը վաւերական է : զի ասով վճիռ տուած կըլլայ , եւ վճիռը Ազ-գային Ժողովին իրաւունքն է , եւ չկայ իշխա-նութիւն կամ Ժողով , որ կարենայ զայս իշխա-նութիւնը կապտել :

ՏԵՂԵԿՈՒՄԷՆ ԻՐԱՆԻՆԻ ԵՄԵՆԻ ԷՄԵՆԻ ԷՄԵՆԻ ԷՄԵՆԻ
ժողովն Քաղաքական Ժողովոյ հրաժարագրին վրայ իրաւասութեան զիւանին բերած տեղեկագիրը կարգացուեցաւ տեղեկաբեր Տ. Մատթէոս Մ. վարդապետին ձեռօք , որոյ պատճէնն է .

« Քաղաքական Ժողովոյ հրաժարականը՝ զոր Ազգ. Ժողովը զիւանիս նախաքննութեանը յանձնարարած էր , ուշադրութեան առաւ դի-ւանս եւ տեսաւ որ Քաղաքական Ժողովն ընտ-րուած է 1875 նոյեմբեր 25 ին , նախորդ Քաղ-ժողովոյ իւր որոշեալ ժամանակէն առաջ հրա-ժարելուն համար , եւ մինչեւ 1874 ապրիլ 30 նախորդին պակասը լրացնելով 1874 մայիս 1 ին սահմանադրական նոր շրջանն սկսած է՝ նոյն թուականին ընտրեալ Կ. ժնակօն Ժողովոյ հետ :

« Ուստի զիւանս կ'եղբակացնէ թէ Քա-ղաքական Ժողովը տարի մի եւս պաշտօնալա-րութեան ժամանակ ունի ըստ Սահմանադրու-թեան , եւ Կրօնական Ժողովոյ հետ իւր շըր-ջանը կը լրանայ 1876 ապրիլ 30 ին :

Առէն-Գղէր Առէն-Պէրէր Գրիգոր Գ. ԱՃԼՄԵԱՆ Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ
ՍԵՆԵՔԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
6 Յունիս 1875
Ի Ղալաթիա

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իրաւասութեան զի-ւանին այս կարճ տեղեկագիրը լսեցիք . Ժողո-վն եթէ ուզէ՝ կրնայ անմիջական քուէով ո-րոշել այս խնդիրը . եւ եթէ վիճարանութեան ենթարկել ուզէ , Օրակարգը պէտք է անցնի : Ուստի նախ այս երկու կէտերը քուէի պիտի գնեմ :

Քուէի զրուելով ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ անմիջա-կան քուէով որոշել խնդիրը :

Յետոյ տեղեկագրին եզրակացութիւնը քը-
ւէի դրուելով, ժողովն իւր մեծամասնութեամբ
բըն, այսինքն 27 ձայնով ԸՆԴՈՒՆԵՑ որ Քաղ.
Ժողովը տարի մի եւս իւր պաշտօնը շարունա-
կէ մինչեւ իւր օրինական շրջանը լրանայ, որ
է 1876 ապրիլ 30:

Որոշուեցաւ Սրբազան Նախագահին յանձ-
նել որ ժողովոյն այս վտանգութեան ցոյցը
Քաղ. ժողովին հաղորդէ եւ հրաւիրէ իւր պաշ-
տօնը շարունակել մինչեւ 1876 ապրիլ վերջ:

Ե.

Տեղէն-Տեղէն ընդհանրութեան

Տեղէն-Տեղէն ընդհանրութեան

Ատենապետ փաշան՝ Նախաքննիչ 8 դի-
ւաններէն 4ին իրենց ատենապետներն ընտ-
րած ըլլալը ծանուցանելով, անոնց ցուցակը
Ժողովին ներկայացոյց, որ է.

Չեղեմ-Տեղէն ընդհանրութեան

S. Խորէն Ս. Արքեպիսկոպոս

Կալան-Տեղէն ընդհանրութեան

Ղազարոսեան Գ. Էֆէնտի

Իր-Տեղէն ընդհանրութեան

S. Մատթէոս Մ. վարդապետ

Խոսաքեան Խ. Էֆէնտի

Միսաքեան Խ. Էֆէնտի

Սեղեմ-Տեղէն ընդհանրութեան

Սեղեմ-Տեղէն ընդհանրութեան

Ա.

Տեղեկագրի

Իր-Տեղէն ընդհանրութեան

Տեղեկագրի ընդհանրութեան

Մատթէոս Էֆէնտի Այլ-Տեղէն

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կարգն եկաւ որ օր-
ուան խնդիրներուն անցնինք. ասոնց առաջինն
է Այլատեան Մատթէոս Էֆէնտիի հրաժարա-
կանին վրայ Իրաւասութեան զիւանին բերած
տեղեկագիրը: Ժողովը անշուշտ կը յիշէ, որ
ասկէց առաջ Այլատեան Էֆէնտի հրաժարած
է եղեր ըսելով թէ երեսփոխանութեան պա-
տիւն ապահովուած չէ, եւ թէ քանի որ ժո-

ղովոյ կացութիւնը վտանգի եւ պատիւն աղար-
տուելու ենթարկեալ է՝ չեմ կրնար ընդունիլ
այդ պաշտօնը: Ժողովն Այլատեան Էֆէնտիի
այս պատճառարանեալ հրաժարագիրն ուշա-
դրութեան առնելով յանձնեց էր ի նախաքն-
նութիւն Իրաւասութեան զիւանին, յորմէ ե-
կած տեղեկագիրն ալ նախընթաց նստի ատե-
նագրութեան մէջ արձանագրուեցաւ առանց
կարգալու. եւ թէ որ ժողովն ուզէ՝ կկարգանք
զայն այսօր յատենի:

Քուէի դրուելով, ժողովը հարկ չդատեց
կարգացուիլը:

Ատենապետ փաշան հրաւիրեց թեր եւ
դէմ խօսիլ ուղղներն անունին արձանագրել
տալ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Որովհետեւ խնդիրն
իմ անձնականիս կը վերաբերի, ուստի առա-
ջին խօսքն իմս է:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Այս եւ ասոր նը-
ման հին խնդիրներ նկատողութեան առնուլ
հարկ չեմ տեսներ. կառաջարկեմ ժողովին՝ բո-
լորովին ետ թողուլ այդ խնդիրները, եւ կա-
րել որ ու կենսական խնդրոց նուիրել իւր սուղ
ժամերը. արդէն կարեւորագոյն խնդիրներ ու-
նինք, ինչպէս են Վերաքննութեան եւ Գաս-
տիարակութեան խնդիրներն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Նախա-
գահն կառաջարկէ, որ փոխանակ այս տեսակ
անցեալ եւ հին խնդիրներով զբաղելու՝ կարե-
ւոր գործովք զբաղի ժողովն. առաջարկու-
թիւն մը՝ որ բոլորովին մեր Յրակարգին առա-
ջին խնդիրը ջնջելու վրայ կը կայանայ. բնա-
կանաբար այս առաջարկութեան վրայ պիտի
խօսուի նախապէս. բայց որովհետեւ արդէն
Այլատեան Էֆէնտիի պատճառարանեալ հրա-
ժարագիրը կարգացուեր եւ յղուեր է նախա-
քննութեան, զիւան մը այս խնդրոյն համար
աշխատեալ եւ տեղեկագիր բերեր է, զայս ջըն-
ջելու համար Սրբազան Նախագահին պէս բար-
ձր իշխանութեան մը առաջարկութեանը կը
կարծուի. ուստի պարտաւորութիւն կը հա-
մարիմ ամենայն սիրով խոնարհիլ, այս առա-
ջարկութեան վրայ հրաւիրել ժողովին ուշա-
դրութիւնը, եւ եթէ ձայնակիցներ կան՝ քուէի
դնել: Միայն թէ այս կէտին մէջ ալ օրինական
ձեւը պահելու համար Գիւանս պարտաւորու-

թիւն կը համարի խնդրել Նորին Սրբազնութե-
անէն, որ իւր առաջարկութիւնը բարեհաճի զը-
րաւոր կերպիւ հաղորդել Գիւանին:

Այս միջոցին ոմանք Սրբազան Նախագա-
հին առաջարկութեան ձայնակից ըլլալնին յայտ-
նեցին:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խօսք կուզեմ Սըր-
բազան Նախագահին առաջարկութեան դէմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ Սրբազան
Նախագահին առաջարկութիւնը ձայնակիցներ
ալ ունեցաւ, Գիւանին պարտքն է խնդիրը
կանոնական ճամբուն մէջ դնել. ասոր համար
ինչպէս արդէն աղաչեմ էի Նորին Սրբազնու-
թեանը, դարձեալ կաղաչեմ որ կանոնաց տը-
րամագրութիւնը յարգելով չնորճ ընէ իւր ա-
ռաջարկութիւնը գրով հաղորդել Գիւանին:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ժողովին գոյու-
թիւնն ու պատիւն ամենէն առաջին խնդիրն է,
եւ դաստիարակութեան խնդրէն աւելի կարե-
ւորութիւն ունի:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ըսի թէ առաջին
խօսքն իմս պէտք է ըլլայ, որովհետեւ խնդիրն
ինձ կվերաբերի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երբ գրով տրուի Սըր-
բազան Նախագահին առաջարկութիւնն, այն
ատեն կրնայ խօսուիլ, Ձեմ կարծեմ որ Սրբա-
զան Նախագահը չուզէ գրով տալ իւր առա-
ջարկութիւնը. զի եթէ չտայ՝ ժողովս կրնայ
վարանիլ իւր ընելիքին վրայ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ես խնդրոյն ոչ ի
նպաստ եւ ոչ ընդդէմ խօսք մը ընել կուզեմ.
Ես միակ պահանջում մը կրնեմ, այն է այս
տեսակ մասնաւոր խնդիրները բոլորովին վեր-
նան եւ ուրիշ կարեւոր խնդիրներ ժողովին
ուշադրութիւնը գրաւեն: Եթէ հարկ կը սե-
պէք, կրնամ գրով ալ տալ իմ առաջարկու-
թիւնս, որ խիստ պարզ է:

Չայս ըսելով Նորին Սրբազնութիւնն իւր
առաջարկութիւնը գրի առաւ, եւ իրեն հետ
ձայնակիցող երեսփոխանաց ոմանց կողմանէ ալ
նոյն թուղթն ստորագրուելէ ետեւ Գիւանին
տրուելով կարգացուեցաւ, որ է.

« Կառաջարկեմ Ազգային ժողովոյն՝ որ այս
տեսակ խնդիրները վերնան Գիւանէն, եւ ա-
սոնց վրայ չխօսուելով մեր կենսական խըն-
դիրներուն, այսինքն վերաքննութեան եւ

դաստիարակութեան խնդիրներուն անցնիլ բա-
րեհաճի »:

6 յունիս 1875

Պատրիարք Կ. Պօլոսոյ
ՆԵՐՍԷՍ ԱՐԲԵՂԻՍԿՈՂՈՍ

(Զ-յն-է-յ-)

Գրիգոր քահանայ	Աճէմեան
Կարապետ	Պէրեանց
Ղազար	Հովուեան
Յարութիւն	Մարգարեան
Յարութիւն	Չէնճիրճեան
Յովհաննէս	Աշխատրեան
Յովհաննէս	Աղայէկեան
Յովհաննէս	Էսաեան
Յովհաննէս	Կրճիկեան
Ռուբէն	Կիւմիւշկէրտանեան
Սիմոն	Նորատունկեան
Ստեփան	Պէլլիկճեան

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ Այ-
վատեան Էֆէնտիի հրաժարագրոյն պատճառա-
բանութեան վրայ, որ Օրակարգ է. Ի՞նչպէս
կարելի է՝ առանց վիճարանութեան քուէար-
կել, օրակարգին մէջ գտնուած խնդրոյ մը վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովին Օրակարգը
կը պահանջէր որ վիճարանութիւն ըլլար Իրա-
ւասութեան զիւանին տեղեկագրոյն վրայ.
բայց վիճարանութեան չօկսուած՝ Սրբազան
Նախագահն խօսք ուղեց, եւ ընկանաբար
խօսքն իրն էր. այնպիսի առաջարկութիւն մը
ըրաւ որ խաղաղութեան համար ըլլալով՝ եթէ
ոչ ըստ կանոնի, գէթ ըստ Աւետարանի ամեն
որոշում եւ վճիռ կրնայ ջնջել. ես ամեն ակ-
նածութեամբս հանդերձ Նորին Սրբազնութեան
առաջարկութիւնը գրով ուղեցի եւ ստացայ,
զոր քիչ մ'առաջ կարդացի. եւ զոր 12 երես-
փոխանք ալ արդէն ստորագրեցին, եւ այլք
պատրաստ են ստորագրել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչ բան կ'ըս-
տորագրեն. այդ տեսակ խնդրոց քննութիւնը
պահանջողներն ուր մնացին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Առաջարկութիւնը
քիչ մը ընդարձակ է. այս տեսակ խնդիրնե-
րը վերնան ըսելով շատ խնդիրներ կ'ակնար-
կէ եւ ուղղակի խնդրոյն չը պատասխանէր.
բայց յայտնի է որ բուն խնդիրն Այլատեան
Էֆէնտիին հրաժարման վրայ վերաբերի, եւ
ասոր վրայ Իրաւասութեան զիւանին տեղե-
կագիրը կայ, զոր թէ եւ Սրբազան Նա-

խաղաղին առաջարկութիւնը հիմնովին կ'ըսակէ եւ կը ջնջէ, սակայն տեսակ մը բարեփոխութիւն ալ կը նկատուի նոյն առաջարկութիւնը, եւ իբր այն կառավարկեմ ըստ կանոնի յղել այն Գիւանին՝ ուսկից այս տեղեկագիրն եկած է. եթէ նոյն Գիւանը ջնջէ եւ վերջացնէ խնդիրը՝ լաւ. իսկ եթէ պնդէ իւր տեղեկագրին եզրակացութեան վրայ, ուրիշ ճար չը մտար, այլ վիճաբանիլ միայն. ուստի այս առաջարկութիւնը քուէի կը դնեմ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Այդ քուէարկութեան առաջ կը յայտարարեմ որ եթէ Ազգ. ժողովն այսպէս մասնաւոր կրից եւ գործոց տեսարան պիտի լինի, ես հոս գործ չունիմ: Տէրութիւնը, Ազգն ու ժողովը գործ կը պահանջեն ինչ եւ ոչ խօսք. պէտք է խնայեմք ժամանակին. ժողովին ժամերը թանկագին են, ես չեմ կրնար թոյլ տալ որ այս տեսակ սնամէջ խնդիրներ ձեր սուղ ժամերը գրաւեն:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ, Սրբազան Հօր պատասխանելու համար. մեք Օրակարգին կը հետեւինք. Ազգային ժողովոյ պատիւը պէտք է պահել. Սրբազանին սպանալիսաց առջեւ չեմք կրնար դռնել մեր երեսփոխանական իրաւունքն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ տեղեկագիր մը կայ, կամ այն տեղեկագիրն ուղղելու չէր, եւ կամ այս խօսքերն ըլլալու տեղի չը կան. հիմա գործն այն կէտին եկած հասած է որ բարեփոխութիւն կ'առաջարկուի, բայց չէթէ մէկ կէտին վրայ, այլ ի հիմանց քանդելու տեղեկագրեալ խնդիրը. ինչ կը վախնաք վիճաբանութեանէ. միթէ Եւրոպայի ժողովները վիճաբանութիւն, միջեւ անգամ վէճ չեն ունենար. այո, բայց մեր ալ կը տեսնեն. ինչու համար կանոն ղեւելու է. հարկաւ անկանոն բաներ կրնան պահարկիլ. անոնց առջեւն առնելու համար: Ուրեք գրկենք Իրաւասութեան գիւանին՝ Սրբազան Հօր եւ երկոտասանից առաջարկած հիմնական բարեփոխութիւնը. թերեւս ինքն ալ կրնայ յարիլ այս առաջարկութեան եւ խնդիրը բնական ճամբով ի խաղաղութիւն կը դառնայ. իսկ եթէ նոյն Գիւանն նորէն պնդէ իւր տեղեկագրին վրայ, այն ատեն կ'ստորինք. բայց այսօր ձգեցէք այս խնդիրը:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Ամենը 12 չեն. մեք

ալ պիտի ստորագրէինք, բայց թուղթը չը տուիք մեզ:

ԱՏՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հարկ չկայ աւելի ստորագրութեան:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Ես շատ ըսելիքներ ունիմ. Օրակարգի վրայ իմ խօսելու իրաւունքս կը պահանջեմ Մայր գիւանէն. մեք ամեն նախատանայ համբերեցինք՝ սպասելով այս օրերուն, որ Ազգ. ժողովն քննէ անցեալ անցքերը: **ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.** — Քեզմէ աւելի ես խօսելիք ունիմ:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Ո՛վ կարգելու դձեղ խօսելէ. խօսեցէք, մեք ալ պիտի խօսիմք, որ արդարութիւնը երեւան գայ, բայց մինչդեռ դուք խօսիլ կուզէք՝ ձերիններն են որ մեր խօսելուն դէմ արգելք կ'յարուցանեն:

Այս խօսակցութիւնը՝ որ շփոթութեան պատճառ եղան, շատ չտեւեցին:

Ատենապետ փաշային ազդարարութեան եւ զանգակահարութեան վրայ՝ հանդարտութիւնը շուտով վերահաստատեցաւ:

Անմիջապէս յղման առաջարկութիւնը քուէի դրուելով, մէկ ձայնի դէմ 18 ձայնով ԸնդՈՒՆՈՒՅՑԱԻ Սրբազան Նախագահին գրաւոր առաջարկութիւնն Իրաւասութեան գիւանին յղել. հետեւապէս խնդրոյն օրաձգումն եւ կրկին քննութիւնն որոշուեցաւ:

Բ.

ՏԵՂԷԷՔԷՐ ԳՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԵՄՈՒՆԷՆԻ ԷՎԵՐԵՐԵՅ Տ. ԳՐԵԷԷՆԻ ԷՎԵՐԵՐԵՅ ՍԵՆՆՅՈՒՆԷՅ

Սրուանձտեանց Տ. Գարեգին վարդապետին ազերսագրոյն վրայ Յարաբերութեան գիւանին տեղեկագրոյն եզրակացութիւնը կարդացուեցաւ, որ է.

«Նկատելով որ Ազգ. ժողովոյդ Օրակարգը գտնուող կալուածոց գիւանի տեղեկագրին մէջ Մշոյ Ս. կարապետի վանուց խնդիրը բնաւ նկատողութեան առնուած չէ, ի հարկէ իրրեւ դեռ չաւարտած խնդիր համարելով դայն. նկատելով միանգամայն թէ Մշոյ Ս. կարապետի վանուց հաշուական գործողութիւնը վանական խորհուրդն առ Քաղ. ժողով տեղեկագրած ըլլալով, դեռ կը շա-

« րունակուի այդ խնդրոյն վերաքննութիւնը « Քաղաքական ժողովոյ մէջ, ինչպէս որ Գարեգին վարդապետ կը յայտարարէ եւ Գիւանս « ալ ստուգեց Քաղաքական ժողովոյ գիւանէն, « որով այս անգամի վանորէից համարառութեան մէջ Մշոյ Ս. կարապետի վանուց խնդիրը չըլլալը կերեւայ, հետեւաբար Գիւանս « կեզրակացնէ Գարեգին վարդապետի սոյն « աղերսագիրը յղել առ վարչութիւնն »:

Յետ այսորիկ Ատենապետ փաշան տեսնելով որ խօսք ուզող չկայ, քուէի դրաւ, եւ նոյն եզրակացութեան համեմատ ՈՐՈՇՈՒՅՑԱԻ խնդիրը վարչութեան յղել:

Գ.

ՏԵՂԷԷՔԷՐ ԳՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԵՄՈՒՆԷՆԻ ԷՎԵՐԵՐԵՅ Տ. ԳՐԵԷԷՆԻ ԷՎԵՐԵՐԵՅ ՍԵՆՆՅՈՒՆԷՅ

Ատենապետ փաշային առաջարկութեամբ եւ ժողովոյն հաւանութեամբ սոյն տեղեկագիրը կարդացուելէ ետեւ Ատենապետ փաշան խնդրոյն կարեւոր եւ վիճաբանութեան արժանի ըլլալը յիշեցնելով, եւ յայտնելով թէ նոյն պահուն Օգոսէն էֆէնտի կողմէն գրաւոր առաջարկութիւն մը մատուցուած է Գիւանին, վիճաբանութեան ձեռնարկուելէ առաջ դայն ներկայացոյց ժողովին, որ կարդացուեցաւ, եւ ահաւասիկ.

« Կառավարկեմ որ Մուրատեան վարժարանի խնդիրն՝ ըստ որում դատական եւ օտարի հետ՝ ազգային վկայեալ փաստաբաններէ եւ օրէնսգէտներէ բաղկացեալ Յանձնաժողով մը յանձնուելով, անոր կարծիքն « առնուելէ ետեւ Ազգային ժողովը վիճաբանութեան մտնէ եւ ըստ այնմ իւր վճիռը տայ »:

6 Յունիս 1875 **Օ. ԽՅԱՍՍԱՐԵԱՆ**

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ասի բարեփոխութիւն մ'է, որ կանխաւ պէտք է նկատողութեան առնուի. ուստի եթէ դիտողութիւն ընող չկայ, նախ դայս քուէի պիտի դնեմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (ՏԵՂԷԷՔԷՐ ԴԵՄՈՒՆԷՆԻ ԷՎԵՐԵՐԵՅ) Եթէ փաստաբաններէ բաղկացեալ Յանձնաժողով մը պէտք է այս մասին, ինչպէս կառավարկէ Օգոսէն էֆէնտին, պէտք է դարձեալ վարչութեան ղրկել որ Յանձնաժողովն ինք կազմէ եւ պէտք եղածը հոգայ.

միացեալ գիւանքս յարմար չդատելով հոս խօսուելի այս բաներուն վրայ, առաջարկած ենք խնդիրը վարչութեան յղել:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կձայնակցիմ Քրիստոստուր էֆէնտիին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ լաւ, վարժարանին խնդիրը վարչութեան յղելու մասին հակառակ խօսող չկայ. ըսել է այս կէտն ընդհանրապէս ընդունուած է: Բայց միացեալ գիւանաց տեղեկագրին եզրակացութիւնն ուրիշ չ կէտ ալ կարողանակէ. առաջինն է Սամուէլ Մուրատայ յիշատակին համար չնորհակալութեան քուէ տալ, եւ երկրորդն է Թէոդորեան Սարգիս վարդապետին համար գովութիւն յայտնել: Ուրեմն այս երկու կէտերուն վրայ խօսիլ ուզողները պէտք է խօսք առնուն:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Միացեալ գիւանաց տեղեկագրին եզրակացութեան առաջին եւ երկրորդ կէտերն, այն է Ազա Սամուէլ Մուրատայ յիշատակին համար չնորհակալութեան քուէ եւ Թէոդորեան Սարգիս վարդապետին համար գովութեան քուէ, լաւագոյն չեմ դատեր այժմէն ընդունիլ եւ քուէ տալ. որովհետեւ ասանկ կարեւորութիւն եւ մեծ կըլիս ունեցող խնդրոյ մը մէջ կանսնեմ որ Ազգն ալ իւր պարտքը կատարելու չէ փութացեր եւ մինչեւ ցարդ դանդաղեր է. ուստի նոյն եզրակացութեան երրորդ կէտին համաձայն որ ընդունուեցաւ, պէտք է նախ խնդիրը վարչութեան յղենք. եւ նպաստաւոր արդիւնք մը ձեռք բերելէ ետեւ ճակատաբաց քուէնիս տանք:

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Կձայնակցիմ Մէրեէմ-գուլի էֆէնտիին:

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ Յ. ԷՖ. — Նոյնպէս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը տեղեկագրեր Քրիստոստուր էֆէնտիին է, եթէ կուզէ պատասխանել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Միացեալ գիւանաց տեղեկագրին եզրակացութեան առաջին կէտը մերժել լաւ չըլլար. Սամուէլ Մուրատայ նման կտակ ընող բարերար անձ մը դեռ չէ եկած մեր Ազգին մէջ. կարելի է որ այսուհետեւ գայ. երբ այս անձն իւր ստացուածոց գրեթէ մէկ կէտն Ազգին որբոց եւ աղքատաց կկտակէ, միթէ ժողովս անոր յիշատակին չընորհակալութեան քուէ տալով մեծ բան մը ըրած կըլլայ: Գալով երկրորդ կէտին՝ որ է

Թէոզորեան Սարգիս վարդապետին գովութեան քուէ տալ , այս մասին իւր քառահատոր պատմութիւնը կարգացողները լաւ կ'հասկնան թէ ինչ մեծ ճիգեր թափեր է այդ երեւելի կտակն յօգուտ ազգին ձեռք բերելու եւ իւր նպատակին ծառայեցնելու համար . արդէն իւր գրած պատմութիւնը մեծ գործ մ'է , զոր ես կարգալով ձանձրացայ , սէր մնաց որ ինք չէ ձանձրացիր գրելով , եւ երկար բարակ գրելէ ետեւ այդ ստուար գործոյն տպագրութեան հոգն ալ տարեր եւ ի լոյս ընծայեր է : Այս երկու առաջարկութիւններս ալ կապակցութիւն չունին երրորդին հետ . երրորդն՝ որ է բուն վարժարանին խնդիրը , պէտք է Վարչութեան յղուի :

ԻԻԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ. — Միացեալ շէնքանաց տեղեկագրին եզրակացութեան առաջին կէտին , այն է Ազա Սամուէլ Մուրատի յիշատակին շնորհակալութեան քուէ տալու առաջարկութեանը պիտի ձայնակցէի , եթէ այդ կտակէն Ազգին ձեռքը բան մը անցած կամ անցնելու յոյս մը ըլլար . բայց քանի որ տակաւին Ազգին ձեռքը բան մը անցած չէ , չենք կրնար այժմէն աճապարել շնորհակալութեան քուէ տալ . այլ փափաքելու ենք ինչպէս Մէրեթմ-գուլի էֆէնտին ըսաւ , որ Վարչութեան տալիք տեղեկագրոյն վրայ գործը հասկցուելով , եթէ ճարտար փաստաբանից խորհրդակցութեամբ զիւրին միջոցներ կան եւ պիտի կրնայ արդիւնք մը ձեռք բերուիլ , այն ատեն ձեռք բերուելիք արդիւնքին հաւանականութեամբ կրնանք շնորհակալութեան քուէ տալ . Նոյնպէս երկրորդ կէտին , այն է Թէոզորեան Սարգիս վարդապետին գովութեան քուէ տալու առաջարկուելուն նկատմամբ կրսեմ թէ ստոյգ է որ այդ կտակը ձեռք բերելու մասին շատ աշխատանք եւ քրքրտինք թափած է , մինչեւ իսկ բանտարկութիւն կրած եւ վերջապէս յաջողած է զայն ձեռք բերել . ետքն ալ Վենետիկի միաբանութեան դէմ մաքառեր բողոքեր եւ զանազան նեղութեանց ենթարկուել է . այս ամէնը գովութեան արժանի են իրաւամբ . սակայն ինչպէս որ կտեսնենք՝ գործին մէջ ուրիշ պարագաներ ալ մըտած են եւ կտակն իւր նպատակէն խտորեցնելու միջոցներ մտածուեր են . այս գործողութեանց ալ հաւանականաբար մասնակցած է Սարգիս վարդապետ՝ միաբանութեան մէջ գտնուած ատենը . թերեւս դատին մէջ անյաջող պարագաներ երեւան ելնեն , եւ կարող

չըլլանք իրաւունքնիս ձեռք բերել : Անոր համար այժմէն քուէ տրուիլն՝ պատշաճ չեմ համարիր . կրնայինք փութալ առ ի շնորհակալութիւն՝ եթէ իւր բողոքներն ու հրատարակութիւններն բաժանմանէն յետոյ տեղի չունենային , որով ընդ կասկածանօք կ'մնայ այժմ : Իսկ երրորդ առաջարկութեան դալով կրնդունիմ եւ կրսեմ թէ պէտք է Վարչութեան յղել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Որովհետեւ կրսուի թէ Վարչութեան յղուելէն ետեւ նորէն հոս պիտի գայ խնդիրը , թէ որ այսպէս պիտի ըլլայ , ես ալ կր ձայնակցիմ եւ կրսեմ թէ շնորհակալութեան քուէն թո՛ղ ետքի մնայ : Իսկ դալով այն առաջարկութեան թէ Ազայ Սամուէլ Մուրատի կտակէն մեր ազգին ձեռքը բան չէ անցած , կ'պատասխանեմ որ եթէ այդ կտակն իւր նպատակին չծառայեցնելու համար այլ եւ այլ հնարքներ ի գործ դրուեցան , նա իւր հանգըստեան շիրմին մէջէն երբէք մասնակից չէ եւ տեղեկութիւն չունի ատոնց . ինչո՞ւ զրկուի ազգին շնորհակալութենէն . թէ առաջ եւ թէ վերջը շնորհակալութիւն ընել պէտք է : մանաւանդ որ այս շնորհակալութիւնը խրախոյս մ'է Ազգին բարիք ընել ուղղորդելուն : Ուստի կը կրկնեմ որ այս շնորհակալութիւնը նախապէս ըլլայ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. — Իւթիւճեան էֆէնտիի զիտողութեանց առաջնոյն դէմ , իսկ երրորդին թեր պիտի խօսիմ : Առաջինն է Ազայ Սամուէլ Մուրատայ կտակի մասն . Իւթիւճեան էֆէն. ըսաւ թէ այդ կտակէն Ազգին ձեռքը բան մը չէ անցած . իրաւ է որ ազգին ձեռքը բան մը չէ անցած , սակայն Ազգինն է այդ կտակը եւ միայն անոր գործադրութիւնը Վենետիկ վանքին յանձնած է կտակարարը՝ իր ժառանգորդներն ալ անոր խորհրդակից ընելով . բայց Վենետիկի միաբանութիւնը կապտեր է որոց իրաւունքը , ոչ թէ մէկ ուրիշը . ինչ ըսեր է իւր կտակին մէջ Սամուէլ Մուրատ . Ազգին որը ու անտէրունչ զաւակունքը կրթութիւն միայն . այն , ճշմարտութիւն մ'է որ չկրնար կորսուիլ՝ ուրացուիլ , թէ Ազա Սամուէլ Մուրատ բարիք ընել ուզած է եւ իրականապէս ալ ըրած է . ուստի մեր քուէոյն շնորհակալութիւն յայտնելն աւելորդ չէ թէ եւ ուշացած եւ անցած է ժամանակը : Եթէ Վարչութեան քրննութենէն ալ անցնի եւ հոս գայ , դարձեալ եզրակացութիւնն այս պիտի ըլլայ թէ Ազա Սամուէլ

Մուրատ Ազգին որը եւ անտէր զաւակաց բարիք մը ըրած է եւ միայն Վենետիկ Միաբանութիւնն անոնց իրաւունքը կապտած է . ուրեմն դառն գանգատ՝ նոյն Միաբանութեան դէմ , իսկ այս վեհանձն բարերարին համար՝ շնորհակալութիւն : Գալով երկրորդին այն է Թէոզորեան Սարգիս վարդապետին , որուն համար կրսուի թէ իւր 4 հատոր պատմագրոյն Ազգին որոց իրաւունքը պաշտպանած է , կ'ըսեմ թէ նա երբ Հոգովայ ծոցէն բաժնուած չէր եւ դեռ վարժարանին Տեսուչն էր՝ այդ իրաւունքին նշոյլը անգամ դուրս հանած չէ . իսկ երբ ինչպէս վարժարանին տեսչութեան պաշտօնէն եւ դուրս հանուեցաւ , այն ատեն սկսաւ այդ գաղտնիքները դուրս հանել եւ ճշմարտութիւնը պաշտպանել . եթէ նա Ազգը կը սիրէր , պէտք էր որ սկիզբէն անոր իրաւունքը ճանչնար եւ ճանչցնէր . այն ատեն չէ թէ միայն գովութեան , ինչպէս կրսեն միացեալ զիւանդ՝ այլ շնորհակալութեան քուէին պարտական կրնէր զԱզգն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ խօսք ուզող չկայ , խօսք մ'ալ ես պիտի ընեմ իբրեւ երեսփոխան : (Արեւ Գեղարքունիքի Ռուսիէն էֆէնտի Բողոք) Գործ մը կայ որուն վրայ 50—60 տարի է ի վեր կ'խօսուի . այն է Հայ մը ի Մատրաս մեծագումար կտակ մը ձգած է իւր Ազգին որը եւ անտէր զաւակաց կրթութեանը համար . թէ եւ կտակն իւր նպատակին չէ կրցեր հասնիլ մինչ ցարդ . բայց կտակն ընող բարերարն իւր կամքը յառաջ տանելու համար ամեն բան մտածեր , ամեն միջոց պատրաստեր է եւ մինչեւ իսկ կանոններ ալ շիներ ձգեր է . կտակեալ գումարն երեւան ելած է , բայց կանոններն ոչ . ով գիտէ ինչ կար այդ կանոններուն մէջ . կերեւի թէ ստակը գործածողներուն կամացը համեմատ չէր կանոնը , որ կորսուեցաւ եւ ասոր համար իրաւունք ունիմք կասկածելու որ Ազգին որոցը համար օգտակար էր : Արդ՝ եթէ մէկը կայ շնորհակալութեան եւ գովութեան արժանի , Ազա Սամուէլ Մուրատն է այն . մեր հարքն ոչ թէ միայն շնորհակալութեան քուէով , այլ եւ Հոգուոցն հանգուցեցող մաղթանօքն ալ կ'օրհնէին այսպիսի բարեխիշատակ անձ մը : Գալով երկրորդ կէտին , Սարգիս վարդապետ քանի որ ազատ չէր՝ կրցածին չափ աշխատեր եւ պաշտպաներ է ազգին որոց իրաւունքը , եւ չէ կրցեր իւր նպատակին հաս-

նիլ . բայց վերջապէս իւր ազատութիւնը ձեռք առած միջոցին , իւր ձեռութեան օրերուն մէջ չորս հատոր պատմութիւնը գրեր եւ հրատարակեր է ամեն բան . եթէ ինք չգրէր՝ այն ատեն գաղտնիքներն անձանօթ պիտի մնային . անոր համար նա ալ գովութեան արժանի է Ազա Սամուէլ Մուրատն . ետեւ : Երրորդ կէտը Վարչութեան կը յանձնէր կոր . ինչ է յանձնածնիդ . կտակը . բայց միթէ կտակը ձերն է . եթէ ձերն է եւ Ազգին իրաւունքը բռնաբարւած կը տեսնէք , ինչո՞ւ շնորհակալութիւն չէք յայտնէր կտակողին . իսկ եթէ կտակը ձերը չէ , եւ անոր համար կը զլանաք շնորհակալութիւն . ինչ ո՞՞ք ուզէիք որ կրնէք Վարչութեան յանձնելով . ես քաջ զիտեմ որ դուք ամեննիդ այնպէս կը նկատէք որ կտակն Ազգին է , բայց բռնաբարեալ յայտոց . ուստի կ'ուզէք զայն եւ Վարչութեան կը յանձնէք , որ յոյս մը տայ այս մասին . եւ քանի որ Սրբազան Նախագահը բերած է այս խնդիրը յատեան Ժողովոյս , թէ որ բնաւ յոյս չունենար՝ անշուշտ չէր բերէր . ուստի կրնամ ըսել թէ Սրբազանը եւ Վարչութիւնը պիտի յաջողին այս գործին մէջ : Բայց պէտք է որ Ժողովն կանխաւ իր պարտքը կատարէ , թէ եւ անագան . այսինքն՝ շնորհակալութեան քուէ տալ անզուգական բարերարին Ազա Սամուէլ Մուրատայ , եւ գովութիւն յայտնել Թէոզորեանի ջանիցն ու ազգարարութեան համար :

ԲԱԶՄԱԹԻՆ ԶԱՅՆԵՐ. Քուէ , քուէ :
ՍՐԲԱԶԱՆ ՆԱԹԳԱԶ. — Սոյն տեղեկագիրը բերող միացեալ զիւանաց համար ալ պէտք է շնորհակալութիւն յայտնել , որ Մուրատեան վարժարանի ընդարձակ պատմութիւնը կարգալով այսպիսի հասուն տեղեկագիր մը շինելու աշխատութիւնը կրած են :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խօսք կուզեմ :
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ քուէի ձայներ երեւան ելան , պէտք է որ նախ վիճաբանութիւնը շարունակելի է , թէ՛ ոչ , քուէի դնեմ :

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ , եւ Ժողովը միաձայնութեամբ վիճաբանութեան գաղբին ՈՐՈՇԵՑ :

Յետոյ միացեալ զիւանաց տեղեկագրին եզրակացութեան 5 մասերը զատ զատ քուէի դրուելով , Ժողովը նախ շնորհակալութեան

քուէ արտասանեց Ազա Սամուէլ Մուրատայ յիշատակին համար . երկրորդ՝ գովութեան քուէ արտասանեց Թէոդորեան Յարգիս վարդապետին համար . եւ վերջապէս ընդունեց Ազգ. վարչութեան նկատառութեանը յանձնել Մուրատեան վարժարանին խնդիրը :

Այս միջոցին ժողովը քառորդ մը դադար առնել ետեւ , ժամն Զին վերստին աստեանը բացուեցաւ :

Դ.

Տեղէկաբէր Նույն-Յեան-Մեան Գեորգի Վերայ .
Մարգարէտեան , կրօնական ,
Ինքն-Տեան և այլ եֆէնդիստներ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրակարգը կը պահանջէ Նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրը վիճաբանութեան ենթարկել , որուն տեղեկաբերն է Ռուսիոյն եւ Գիւնտին , եւ ինչպէս յայտնի է՝ երեսօթիսանաց ոմանց այլեւայլ առաջարկութեանցը կը վերաբերի : Այս մասին խօսք ուղղունքն իրենց անունները պէտք է արձանագրել տան ըստ կարգի թեր եւ զէմ խօսելու համար :

Ատենապետ փաշային առաջարկութեամբ եւ ժողովին հաւանութեամբ տեղեկագիրը կարգացուեցաւ :

Իփէկձեւն Զ. ԷՖ. — Ես արդէն կանոնական զիտողութիւն մ'ունէի . այժմ Ատենապետ փաշային առաջարկութիւնը առիթ կուտայ ինձ ընել նոյն զիտողութիւնս : Կանոնադրութեան 62ր յօդուածը կըսէ թէ՝ « Եթէ ձեռնհաս զիւանը պարզապէս մերժման կամ « օրաձգման եզրակայէ , ժողովը կանցնի իւր « Օրակարգին » : Սոյն տրամադրութեան համեմատ ժողովը ընելիք որոշում չունի , զի իւր իրաւունքն այս յօդուածով կաշկանդած է . Ատենապետ փաշան այս կէտը չը յիշեցուց երբ ի վիճաբանութիւն հրաւիրեց զմեզ . ուստի ստիպուած եմ կանոնական զիտողութիւնս ներս ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Տեղեկագիրը չորս կէտեր կը պարունակէ , որ պարզապէս մերժում չեն , այլ պատճառաբանեալ . եթէ պարզապէս մերժում ալ ըլլային , իմ պարտքս էր ժողովին

յայտնել : Վասն զի զիւաններէն եկած տեղեկագիրները նախաքննութիւն կը պարունակեն եւ ոչ վճիռ . ժողովն է որ վճիռ պիտի տայ : Ասոր հետ մէկտեղ , չեմ կրնար ձեռք ներել որ կանոնական զիտողութեան յատկացունէք , տեղեկագիրին վրայ խօսելու համար առած խօսքերնիդ :

Իփէկձեւն Զ. ԷՖ. — Ուրեմն ես սխալ ըմբռնած եմ կանոնադրութեան 62ր յօդուածն , եւ շատ գոհ եմ ձեր տուած բացատրութենէն . վասն զի պիտի կրնամ տեղեկագիրն եզրակացութեանցը վրայ խօսիլ . բայց կազաչեմ ըսէք նախ մեզ թէ՝ կանոնական զիտողութիւնս երբ ընել պէտք է , ես կարծեմ որ երբ եւ ով ալ ըլլայ , կանոնական զիտողութեանց համար խօսք ունի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո՛ , կանոնական զիտողութիւն ընել միշտ ներելի է երեսօթիսանաց , բայց ասոր համար մասնաւոր խօսք խրնդրել պէտք է Գիւնտին . ապա թէ ոչ՝ ուրիշ բանի համար եւ օտար խնդրոյ մը առիթ խօսք առնուլ , եւ զայն կանոնական զիտողութեանց գործածել , ընդդէմ է կանոնի : Մէջերսիս ամենէն օրէնագէտն Ռուսիոյն եւ Գիւնտին է , կրնանք հարցունել իրեն թէ ինք ինչպէս կը հասկընայ այս կէտը :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Ատենապետ փաշային ըսածը շիտակ է . ամենայն ինչ ժողովը կը վճռէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն , Իփէկձեան էֆէնտի , ժողովը կսպասէ ձեզմէ տեղեկագիրն վրայ եթէ զիտողութիւն ունիք ընել . եթէ չունիք՝ կրնաք բեմէն իջնալ . իսկ կանոնական զիտողութիւնն/դ պէտք է ետքի պահէք . ի դիպող պահու Գիւնտը պատրաստ է առանձին խօսք տալ ձեզ կանոնական զիտողութիւննիդ ընելու համար :

Իփէկձեւն Զ. ԷՖ. — Նախաձեռնութեան զիւանն իւր տեղեկագիրն 57. եզրակացութեան մէջ շատ թեթեւ անցեր է այնպիսի երեւոյթի մը վրայ որ ամենուս ուշադրութիւնը դրաւած է , եւ ինչպէս ինձ՝ նոյնպէս շատերուն զգալի եղած է այն . որովհետեւ ընտրութեանց մէջ ընտրողաց մեծագոյն մասին ձեռնպահութեանը նկատմամբ դարման չառաջարկուած ըլլալը պատճառելով կ'մերժէ եւ նկատառման արժանի չդատիր . իսկ իմ 10ր. առաջարկութեանս համար ալ միեւնոյն իմաստն ունի ըսելով նոյն

պատասխանը կուտայ , մինչդեռ իմս սոսկ զիտողութիւն չէր , այլ դարմանն ալ ի միասին նշանակուած էր . որովհետեւ հոն ըսած էի թէ՝ եթէ ընտրողաց մեծագոյն մասն ընտրութեան չէ մասնակցած , ըստ իս երեսօթիսանական ընտրութիւնն անվաւեր համարելու է : Նախաձեռնութեան զիւանը գոնէ իմ առաջարկութեանս նկատմամբ կարծիք մը տալու էր , քանի որ ես դարմանն ալ մէկտեղ ցուցած էի . ուստի այդ եզրակացութիւնն ընդունելի չէ ըստ իս : Մեք ըստ որում ամեն բանի մէջ Գաղղիոյ օրինաց դրութեանը կհետեւինք , պէտք է յիշեցնեմ որ Գաղղիոյ մէջ այն ատեն օրինաւոր է ընտրութիւնն՝ երբ ընտրողաց մեծագոյն մասին վրայ մէկ չորրորդ մասն ալ յաւելնալով մասնակցած են ընտրութեան . օրինակի համար՝ երբ 400 ընտրող կայ թաղի մը մէջ , դոնէ 501 ը պէտք է մասնակից դառնի , որպէս զի վաւերական համարուի ընտրութիւնը : Ես իմ 10ր. առաջարկութեանս մէջ մեծագոյն մասն ըսեր անցեր էի , գիտնալով թէ մեր մէջ այս դրութիւնը չկրնար ճշդիւ գործադրուիլ : Վերջապէս Նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրոյն 57. եզրակացութիւնն անընդունելի է մանաւանդ իմ 10ր. առաջարկութեանս մասին :

Ան այնչափ է տեղեկագիրն վրայ ունեցած զիտողութիւնս . իսկ կանոնական զիտողութիւնս ետքի կ'վերապահեմ :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — (Տեղէկաբէր) Իփէկձեան էֆէնտիին պատասխանելու երկար բան չունիմ . որովհետեւ զիւանիս եզրակացութեանց մէկ քանիներն ընդունեց , միայն 57. ը՝ որ ընտրութեանց կը վերաբերի , չընդունեց ըսելով թէ ինք դարմանը ցուցած է եւ մերժուած : Եթէ Իփէկձեան էֆէնտին եզրակացութեանց վերջինը նկատողութեան առնուր , պիտի համոզուէր . որովհետեւ հոն ըսուած է որ եթէ մոռցուած կէտեր կան , պէտք է ըստ կանոնի ներկայացուին՝ երբ վերաքննութեան համար արդէն սկսուած վիճաբանութիւնը շարունակուի , այն ատեն Իփէկձեան էֆէնտին ալ կըրնայ իւր դարմանը ներկայացնել : Ըսել չէ այս թէ Իփէկձեան էֆէնտին առաջարկութիւնը մերժուած է , այլ ուրիշ պատշաճ ժամանակի մնացած : Ասոր ընդարձակ պատասխանը պիտի տամ վերաքննութեան վիճաբանութիւնը նորէն բացուած միջոցին , ինչպէս որ խօսից կարգին մէջ խօսք ուղած եմ արդէն :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. — Իփէկձեան էֆէնտի կըսէ թէ իւր 10ր. առաջարկութեան մէջ դարմանն ալ հետը նշանակած է . այնպէս չէ . որովհետեւ դարմանն չէ ըսել թէ՝ մեծագոյն մասով չեղած ընտրութիւնն անվաւեր համարելու է . այդ՝ օրէնքով գիտենք արդէն : Այլ պէտք է գիտցնել թէ մեծագոյն մասն ինչպէս ձեռք բերելու է . այսօր ժողովուրդը չը մասնակցի ընտրութեան , ինչ ընելու է որ մասնակցի . այս մասին դարման առաջարկած չէ , հետեւապէս եւ Նախաձեռնութեան զիւանին բերած եզրակացութիւնը շատ ճիշդ է :

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Քուէ , քուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն Նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրը քուէի պիտի ընեմ , որոյ առաջին եզրակացութիւնը Մարգարեան էֆէնտիի առաջարկութեանց կը վերաբերի եւ զանոնք նկատառման արժանի չը դատեն . նոյնպէս երկրորդ եզրակացութիւնը՝ որ Իւթիւճեան էֆէնտիի առաջարկութեան կը վերաբերի , եւ երրորդը՝ Կրճիկեան էֆէնտիի հետ ուրիշ մէկ քանի էֆէնտիներու առաջարկութեանը կը վերաբերի , դարման չը պարունակելուն համար , նկատառութեան արժանի չը դատիր . վերջապէս՝ քանի որ վերաքննութիւնն աւարտած չէ , ամեն ոք կրնայ Սահմանադրութեան յօդուածոց վրայ իւր բարեփոխութիւնն առաջարկել ըսելով Սահմանադրական զիտողութեանց ամենը մէկէն կը մերժէ եւ հարկ չը համարիր որ ժողովն անոնցմով ըզբազի :

Հետեւապէս Նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրը քուէի դրուեցաւ եւ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵԱԼ ԺՈՂՈՎԷՆ :

Ե.

Փոփոխելի Գրամատրութեան և Սահմանադրութեան .
Վերաբանել Յանձնառու Յոփէրը .

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այժմ կանցնինք Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն : Այս այն երեւելի խնդիրն է որ մէկ քանի ժողով եւ մէկ քանի Պատրիարք հինցուց , եւ ինքը տակաւին չը վերջացաւ . աղաչենք զԱստուած՝ որ մեր օրովը վերջանայ : Ուստի պէտք է ըստ իս վերաքննութեան ընթացք մը

որոշել . Վերաքննիչ Յանձնաժողովէն ծրագիր մ' եկած է արդէն , որոյ մէկ քանի յօդուածոց քննութիւնն ալ սկսուած է եւ տակաւին չէ աւարտած . մէկ քանի երեսփոխան ալ խօսք առած են վերաքննութեան համար : Պիտի հարցնեմ ժողովին թէ կուզէ որ սկսուած քննութիւնը շարունակուի , եթէ ոչ՝ ուրիշ նոր ընթացք մը բռնենք :

ԱՍՅՆԵՐ .— Շարունակութիւնը կուզենք :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Եթէ շարունակութիւնը պիտի ըլլայ , ժողովը թո՛ղ որոշէ :

ԱՍՅՆԵՐ .— Ո՛չ , ոչ , արդէն որոշուած է , նոր որոշման պէտք չը կայ :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Շատ լաւ . ուրեմն խօսքն Իփէկճեան էֆէնտիին է , վասն զի ասոկէ առաջ անոր մնացեր է խօսքին կարգը :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ .— Եթէ Իփէկճեան էֆէնտիին է , կաղաչեմ իբրեւ Նախաձեռնութեան տեղեկաբեր՝ որ ինձ տայ իւր կարգը :

Իփէկճեան էֆէնտիին հաճեցաւ իւր կարգն Ռուսինեան էֆէնտիին տալ :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ .— Կը յիշէ ժողովը անշուշտ որ Նախաձեռնութեան դիւանէն տեղեկագիր մը եկած է արդէն , եւ կարդացուած՝ ժողովոյդ մէջ . բայց նոյն տեղեկագիրը թերի նկատուած է մանաւանդ Նախաձեռնութեան դիւանին մեծամասնութեան կողմէն . ոչ թէ մէջը գտնուածներն անընդունելի են , այլ իբր տեղեկագիր թերի է . վասն զի տեղեկաբեր չունի . ասոր համար ստիպուեցայ խօսք առնուլ :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Ներեցէք Ռուսինեան էֆէնտի , հարցում մը ունիմ Ձեզ ընել . դուք արդէն եկած տեղեկագիրը մերժելու համար խօսք առիք արդեօք :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ .— Ո՛չ . դարձեալ կը յիշեցնեմ ժողովին որ տեղեկագիր մը եկած էր , բայց թերի է եւ առանց տեղեկաբերի . անոր համար անկանոն է . ես դայն ամբողջացնելու համար խօսք առած եմ :

Ահաւասիկ .

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Նախաձեռնութեան դիւանէն .— Այսօր ժողովը վերաքննիչ յանձնախումբին ծրագրին վերաբերեալ տրամադրութիւններ , որք վերաքննութեան բովէն անցնելով կրնային օր մը դադար ու հանուիլ :

Բայց կայ այնպիսի կէտ ալ

բին ծրագրին վրայ , շատ իրաւացի եւ ուղիղ կը գտնէ՝ զայն դիտողութիւնը՝ զոր կ'ընէ յանձնախումբը Սահմանադրութեան ընդհանրութեանը վրայ : Սահմանադրութիւնը՝ կ'ըսէ յանձնախումբը՝ խիստ ընդարձակ է իբրեւ Սահմանադրութիւն եւ համառօտութեան կարօտ , եւ խիստ համառօտ է իբրեւ կանոնադրութիւն եւ ընդարձակութեան կարօտ : Ըսել կ'ուզէ թէ՝ Սահմանադրութիւն անուամբ սա տետրակը շատ մ'աւելորդ յօդուածներ ու տրամադրութիւններ կը պարունակէ որք սահմանադրական կետեր չ'են , այլ մանաւանդ հրահանգներ են եւ մասնաւոր կանոններ որոնց տեղը Սահմանադրութեան մէջ չ'է եւ պէտք չ'էր որ հոն գտնուէին :

Ասոր այսպէս ըլլալն ըմբռնել ուղղին բաւական է որ աչքէ անցնէ Սահմանադրութեան տետրակին պարունակած յօդուածները : Պիտի տեսնէ՝ թէ բովանդակ գլուխ մը կայ դուրս ձգելու՝ ատենական կանոնաց վերաբերեալ : Պիտի տեսնէ՝ թէ գլուխ չը կայ որ իր մէջ շատ մը հրահանգի եւ կանոնադրութեան վերաբերեալ յօդուածներ կամ տրամադրութիւններ չը պարունակէ . զորոնք մի առ մի հոս յիշել աւելորդ , բայց օրինակի համար սա մէկ հատը միայն յիշենք՝ « Պատրիարքը իրեն եկած գործերը այսպէս կամ այնպէս կը տնօրինէ եւայլն . . . »

Ինչ բան ունի այսպիսի յօդուած Սահմանադրութեան մէջ . միթէ վարչական կանոնադրութեան մը չը վերաբերի այսպիսի տրամադրութիւն . Սահմանադրութեան այսպիսի թերութիւնները իրաւ առաջին խմբագիրներուն կը վերաբերին , բայց ներօղակաւ կ'ըլլաւք , էֆէնտիներ , երբոր մտածէք նախ՝ թէ Սահմանադրութեան ծնած օրէն ի վեր քանի քանի գոհողութիւն եւ զիջում ըրած են այդ մարդիկը այնպիսի պահանջմանց առջեւ որոց կատարումէն կախված էր Սահմանադրութեան յաղթանակը . երկրորդ՝ երբոր մտածէք թէ այնպիսի ատեն մը երբ ոչ օրէնք կար , ոչ կանոն , ազգային սր եւ է մատակարարութեան մէջ , եւ ժողովներն առջի բերան պիտի չփութին Սահմանադրութեան գործադրութեան ամէն մէկ քայլին մէջ , հնար էր որ չը սպառնալէն բնականապէս հրահանգի կամ կանոնի վերաբերեալ տրամադրութիւններ , որք վերաքննութեան բովէն անցնելով կրնային օր մը դադար ու հանուիլ :

Բայց կայ այնպիսի կէտ ալ որ զանազան խմբագիրներու ձեռքէ ձեռք անցնելով , շեղած է բոլորովին իր նախատեսքը քննարկէն որով եւ օրէնդրաց դիտաւորութեանէն : Այսպիսի են Սահմանադրութեան այս եւ այն յօդուածները՝ զորս կը մասնենք ձեր դատման , որք փոխանակ իրար լուսաբանելու կը հակասեն իրարու , չփոթելով ժողով գումարելու պայմանը ատենան բանալու պայմանին հետ : Մինչդեռ օրէնդրաց բուն դիտաւորութիւնը սա խմբագրութեան մէջ է՝ « եթէ երեսփոխանաց մեծամասնութիւնն արդէն ընտրեալ եւ ներկայ է Պօլսի մէջ , եւ կամ ընտրուելէն ետքը՝ հրաժարման կամ սր եւ է պատճառով խորեալ չ'է նոյն մեծամասնութիւնը , ժողովը կրնայ ի նիստ հրաւիրվիլ , սպասելով հանդերձ հետըզհետէ ընտրութեանց » : Ըսել է առանց այս պայմանին հրաման չը կայ՝ ոչ թէ ատենան բանալու այլ ժողով գումարելու . կամ այլ կերպով այս պայմանաւ միայն ներելի է ժողով գումարել եթէ հարկ ըլլայ՝ առանց ընտրութեանց վերջն առնելու : Իսկ ժողովը գումարելէն ետքը , ատենան բանալու գործողութիւնը՝ որ երկրորդական է (ինչպէս եւ որոշում տալու գործողութիւնը երրորդական) եւ զոր շատեր չփոթեցին ժողով հրաւիրելու գործողութեան հետ՝ յիշեալ հակասական յօդուածոցմէ ներշնչեալ , սահմանադրական կէտ անգամ չ'է այլ կանոնական , եւ կանոնադրութեան կը վերաբերի ատոր պայմանը գծել :

Այս եւ այլ բազում օրինակներով յայտնի կը տեսվի թէ այս Սահմանադրութիւնը խառնակ վիճակի մը մէջ է , եւ թէ Վերաքննիչ յանձնախումբը իրաւունք ունի իր այս ընդհանուր դիտողութեան մէջ : Բայց այսչափով գոհ կ'ըլլայ յանձնախումբը . կը զիտէ ու կ'անցնի , Բաղձալի էր որ աւելի յառաջ վարէր զիւր իմաստասիրութիւնը , եւ աւելի լոյս տար մեզի՝ ցուցնելով թէ ինչ կերպով կարելի է որոշել սահմանադրական յօդուածները կանոնականներէն եւ թէ որոնք են բուն սահմանադրականները , եւ այս կերպով յատկաւ ու մաքրած ըլլար զՍահմանադրութիւնը :

Ասի չ'եղած ինչ վնաս կայ . ինչ զեն ունինք այս վիճակին մէջ մնալէն : Աւասիկ զենը : Ասի չ'եղած եւ Սահմանադրութիւնն այսպէս չը յըստակված , շատ մ'աւելորդ առաջարկութեանց , անտեղի դիտողութեանց եւ անօգուտ ընդդիմախօսութեանց փորձանքին

ենթակայ է միշտ ժողովը : Ոմանց համար Սահմանադրական կէտը կանոնական պիտի թըլի . ոմանք կանոնականը իբրեւ Սահմանադրական պիտի պնդեն անփոփոխ պահել . ոգւոյ եւ տառի վէճեր անպակաս պիտի ըլլան : Հետեւանք՝ ժամերու վաճառում եւ գործոց արգելք : Սահմանադրութեան այս վիճակին աւելի վնասակար հետեւանքը այն ատեն աչքի կը զարնէ երբ կանոնադրութիւն մը շինել հարկ ըլլայ , եւ այս հարկն այսօր աւելի քան զգալի ստիպողական է : Ո՛ր մատակարարութիւննիս կանոնադրութիւն ունի , գլխաւորապէս վարչական կանոնադրութիւն չունինք : Շինել ուղղորտաբար ձեռքը կառեալ կաշկանդեալ պիտի գըտնէ այն հրահանգներուն ու կանոնական տրամադրութեանց բաւըն մէջ որով խոնհալ խրճողեալ է այսօր Սահմանադրութիւննիս , որով խեղդեալ է կերպով մը մեր մատակարարութեանց գլուխը գտնող գործադիր մարմնոց ձեռնազատութիւնը :

Ինչ եւ իցէ , այս բաղձացեալ բարեկարգութիւնը կրնայ ձեռք բերել ժողովը՝ երբ որ ըլլայ Սահմանադրութիւնն այսպէս յստակել տալ թէ յատուկ Մասնաժողովի մը եւ թէ իր ատենապետաց դիւանին ձեռք , եւ ունենալ իր ձեռքը բուն սահմանադրական յօդուածոց ցանկ մը , գոնէ իբրեւ առաջնորդ իբրեւ կողմնացոյց իր սահմանադրական յետագայ քայլերուն մէջ : Ինչ եւ իցէ , մենք շնորհակալ ենք Վերաքննիչ Յանձնախումբին այս օգտակար դիտողութեանէն որ պատիւ կընէ հեղինակաց , եւ որ շուտ կամ ուշ օր մ' իր պտուղը պիտի տայ , կը յուսանք :

Բայց ձեր Նախաձեռնութեան դիւանը՝ այդ աւուր սպասելովն հանդերձ , հարկ կը համարի յայտարարել այսօրվընէ եւ մէկ անդամ ընդ միշտ թէ իրեն յղեալ ամենայն յօդուած կամ առաջարկութիւն այս աչօք պիտի նկատէ , այս ոգով պիտի դատէ , եւ ըստ այնմ մերժում կամ նկատառում պիտի խնդրէ ժողովէն , եւ թէ՛ եթէ այսօրվընէ ինքը կարող չէ աւելորդ յօդուածները դուրս ձգել Սահմանադրութեան , գոնէ այդպիսեաց թիւն աւելցընելու իր կողմէն տեղի չը պիտի տայ ամենեւին այսուհետեւ :

Արդ՝ սոյն ընդհանուր դիտակէտէն զննելով Յանձնախումբին առաջարկած ծրագիրը՝ որ վերնագիր ունի « Փոփոխութիւն տրամադրութեան »

«...» Ձեր գիււանը ուղեց քննել թէ ասոնք են միայն Սահմանադրութեան փոփոխութեան կարօտ կէտերը կամ գոնէ էն կարեւորները: Տեսաւ թէ կան կարեւորագոյն կէտեր վերաքննութեան եւ բարեփոխութեան ստիպողապէս կարօտ որք խոյս տուած են բուրովին Յանձնախումբին ուշադրութեան: Գլխաւորները սա երկուքն են, նախ՝ Թաղային Ժողովը հարկերը երկրորդ՝ Երեւոյն Բարեփոխութեան Եւ շարժումը:

Ա. Թաղային Ժողովը: Ազգին մէջ երեք կարգ մատակարարութիւն կայ որ երեք շրջանակ կը կազմեն. կեդրոնական մատակարարութիւն, գաւառական մատակարարութիւն, թաղական մատակարարութիւն: Այս երեքէն՝ կեդրոնականն ու գաւառականը սահմանադրեալ են իրենց ժողովով, որք կը սահմանեն իրենց տարեկան պիւճէն, կ'ընտրեն իրենց գործադիր կամ մատակարար խորհուրդներն ու կը հսկեն անոնց վրայ անմիջական համարառութեամբ: Իսկ թաղական մատակարարութիւնը՝ որ գուցէ ամենէն կտրուորն է վասն զի հոն կը ծնի ու կը զարգանայ ազգային ոգին, սահմանադրեալ է՝ Այսօր Թաղական խորհուրդները թաղեցոցմէ կ'ընտրվին եւ ուղղակի հսկող ու համարառութիւնն ունին: Թաղին պիւճէն սահմանող մարմին մը չ'ունին: Եթէ այսպէս թողվի, անիշխանութեան դուռ մը բաց թողուլ ըսել է. եւ թաղեցիք իրբեւ ընտրող բնականապէս իրաւունք կ'ունենան իրենց Թաղական խորհուրդին վրայ խուռն բազմութեամբ յարձակիլ եւ համար պահանջելու. լաւ մտածենք այս վիճակին բընական եւ աղետալի հետեւանքը: Արդէն իսկ թաղեր ոմանք իրենց հաշիւը կախեալ դնելով եկեղեցոյ բակերը ի պաշտօնէ հրաւէր կը կարգան ամբոխին զխողովութիւն կամ բողոք ընելու եթէ ունին: Ինչ անզգուշութիւն, ինչ մատակարարական դրութիւն, ինչ հակասութիւն սահմանադրական դրութեան: Եթէ թաղեցոցմէ 10, 20 հոգի բողոք ունենան՝ ո՞վ պիտի դատէ ատոնց բողոքը, Թաղական խորհուրդը որ ամբաստանեալ պիտի գտվի: Եթէ կեդրոնական վարչութիւնը պիտի քննէ ատոնց բողոքը, համարեցէք թէ ամէն մէկ թաղէն 10, 20 բողոք գայ. ալ Վարչութիւնն իր բուր կեանքը թաղային բողոքներով պիտի դրազէ եւ չը պիտի կարենայ մէջէն ելլել: Անեկա-

նելի ճամբայ, խառնակութեան, խռովութեան, անիշխանական բռնութեանց անսպառելի ազբիր. եւ Սահմանադրութեան թշնամիներուն ձեռքը զանի բամբասելու եւ անարգելու փաստ մը: Եթէ Սահմանադրութիւն մը կրնայ ներել որ թաղի մը մէջ թաղեցիք իրենք ըլլան թաղային գործոց համարառու, ինչո՞ւ մի եւ նոյն սկզբամբ գաւառացիք ալ իրենք չ'ըլլան գաւառական գործոց համարառու եւ իրենք չ'ընտրեն իրենց վարչական խորհուրդները, ինչ հարկ կայ գաւառային ժողովի. ինչո՞ւ եւ երեսփոխան ընտրողները փոխանակ երեսփոխան ընտրելու՝ չ'ընտրեն ուղղակի ըզ կեդրոնական Վարչութեան անդամները եւ համարառու չ'ըլլան անոնց. ինչ հարկ երեսփոխանաց ժողովի, հետեւաբար եւ ինչ հարկ Սահմանադրութեան, որ գործերու մէջ չ'իթութութիւն յարուցնելէն զատ արդիւն մը չ'ունի. ուստի ջնջել բառնալու է այդ Սահմանադրութիւնը: Թշնամանք ըրած կ'ըլլամ եթէ մտքէս անցնեմ թէ կայ այս ժողովին մէջ անդամ մը որ ուղեանայ այսպիսի փաստ մը տալ Սահմանադրութեան հակառակորդաց. ձեռք: Ամենքս ալ հոս ջերմ կուսակից Սահմանադրութեան, կը ցանկանք անոր պահպանելի կացութիւն մը տալ ապահովեալ ընդդէմ որ եւ է ստորտանաց կամ յարձակմանց: Աւստի կը ցանկանք հաւատալ թէ չը կայ մէկը մէջերնիս որ այս անիշխանութեան փոսը բաց ձգել ուղե մեր Սահմանադրութեան մէջ եւ թաղային ժողովոց հաստատութիւնը մերժէ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Շիտակ է:
ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Ծնորակալ եմ:
ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Սխալ է:
Սոյն յուսով եւ վերոյիշեալ նկատողութիւններով ձեր նախաձեռնութեան Գիււանը սա օրինական յօդուածը կ'առաջարկէ:
« Ամեն թաղ իր բնակչաց կողմէն ընտրեալ Թաղային ժողովով մը ներկայացեալ է, 30 անդամէ բաղկացեալ որոց գոնէ 25 ը աշխարհական: Թաղային ժողովը կը սահմանէ Թաղական պիւճէն, կ'ընտրէ Թաղական խորհուրդը, անոր տարեկան համարատուութիւնը կը քննէ եւ թաղին ընդհանուր գործերը վճարաբար կը անօրինէ կեդրոնական Վարչութեան բարձր հսկողութեանն ու հովանաւորութեանը տակ որում կը հազորդէ տարւէ տարի թաղին վիճակագրութիւնը:

Թաղային ժողովի մը անդամ չը կրնար միանգամայն Թաղական խորհուրդի անդամ ըլլալ, եթէ ընտրվի՝ մէկէն կամ միւսէն պէտք է հրաժարի:

Բ. Երեւոյն Բարեփոխութեան Եւ շարժումը:

Երեսփոխանաց բաշխման եւ ընտրութեան եղանակը՝ մինչեւ ցարդ գործադրվածին վրայ՝ խիստ կարեւոր բարեփոխութեան կարօտ է: Այս բաշխումը մինչեւ ցարդ Պօլսի մէջ թաղերու վրայ եղած եւ իւրաքանչիւր թաղէն պղտիկն անգամ՝ իր երեսփոխանները զրկած է Ազգային ժողովին: Այս անիմաստ բաշխման ողորմելի արդիւնն երեւան եկաւ եւ տեսինք թէ՛ 30, 20, 10 եւ մինչեւ 7 քուէով ընտրեալներ ունեցանք, որք իրբեւ ազգային երեսփոխան եկած հոս բազմած են: Շատերնիս այս կարգէն ենք եւ մատով ցուցնելու է մէջերնիս մէկը որ 100 քուէով ընտրեալ ըլլայ, Հոս իւրաքանչիւրին անհատական յարգութիւնն ու արժանիքը մէկդի առնելով՝ որ ամենեւին խնդրի տակ չ'է, կը հարցնենք ուրկէ կը չափվի երեսփոխանի մը պաշտօնական յարգն ու պատկառանքը՝ կամ մէկ բառով օրինական իշխանութիւնը, եթէ ոչ՝ իր վրայ համարում ունեցող անձանց բազմութենէն եւ իր վաստկած քուէից քանակութենէն:

Արդ՝ ինչ յարգ ընծայած կ'ըլլանք մենք մեզի եւ ինչ անիմաստ զիրքի մէջ զրած 'զայս Ազգային ժողովը երբ կ'ընդունինք 10, 20, 30 քուէով ընտրեալ երեսփոխան մը որ 2 միլիոն բազմութեամբ ազգ մը կ'ուղէ ներկայացնել, կամ՝ Պօլսի երեսփոխան ըլլալով՝ 8 կամ 10 հազարի չափ ընտրող կ'ուղէ ներկայացնել, Այսպիսի ընտրեալ մը կրնայ շատ շատ 'զինքն ընտրող թաղին թաղային ժողովին անգամ ըլլալ, իսկ Ազգային ժողովին՝ ոչ: Գաւառներէն ընտրված երեսփոխանները մէջերնիս աւելի օրինական իշխանութիւն ունին քան թէ Պօլսէն ընտրեալները. անոնք գաւառը ներկայացնող ժողովէ մ'ընտրեալ ըլլալով, բոլոր գաւառէն ընտրեալ կը համարվին:

Ոչ ոք մենէ, էֆէնտիններ, կարծեմ այս սպօրէն վիճակին մէջ կ'ուղէ մնալ, եւ Ազգային ժողովին պատուարժանութիւնն իրեն վայելուչ աստիճանին հանել բարձրացնելու համար չ'ուղեր իսկոյն դարման տանիլ այս վիճակին:

Կարելի է ոմանք կարծեն թէ մեր քննած այս կետը ընտրողաց անտարբերութեան կեան է եւ իրբեւ քուէից քիչութեան պատճառ աւոր դարմանն է փնտռածնիս. յիշաւի՛ 'ատ ալ մեծ անտեղութիւն մըն է որ երեսփոխանաց շատին յանձանձանքը: զբաւած է, եւ որ ըստ հիմնական սկզբանց Սահմանադրութեան կը զրկէ յամենայն օրինաւորութենէ՝ 'զայն ընտրութիւնը որում չ'է մասնակցած ընտրողաց բացարձակ մեծամասնութիւնը. բայց այդ կէտը չ'է այժմ քննածնիս. ատոր վրայ մեր կարծիքը երկրորդ ընթերցանութեան կամ յօդուածոց վիճարանութեան մէջ յայտնել պահած ենք: Մեզի համար հոս եթէ ընտրողաց համայնութիւնն ալ մասնակցի չը բաւեր, Հոս խնդիրը ընտրութեանց հիման՝ կամ բեմական լեզուով ընտրութեանց պատուանդանին նեղ ըլլալն է, եւ բնական դարմանը՝ 'զանի ընդարձակել է, այսինքն ընտրողաց օրինական թիւը բազմապատկել. եւ սա՛ալ երեսփոխանաց բաշխման եղանակաւը կ'ըլլայ: Որքան բաշխումը ճշաւորի, այնքան կը սեղմի ընտրութեանց պատուանդանը, եւ փոխադարձ որքան բաշխումը սեղմի, այնքան ընտրութեանց պատուանդանը կ'ընդարձակի:

Աւստի փոխանակ քսանի չափի թաղերու վրայ բաշխելու Պօլսի երեսփոխանները, Պօլսի երեք շրջանակի բաշխելու է եւ այն երեք շրջանակին վրայ բաշխելու է Պօլսէն ուղված 100 երեսփոխանքը. զորօրինակ՝ 40 Բիւզանդեան շրջանակէն, 30 Եւրոպական Վոսթրէն, եւ 30 Ասիական Վոսթրէն: Շրջանակին ամէն մէկ թաղին մէջ զատ զատ կ'ըլլան ընտրութիւնները մի եւ նոյն ցանկի վրայ, եւ իւրաքանչիւրն իր քուէհամարի արդիւնը կը զրկէ կեդրոնին ուր ընդհանուր քուէհամարով ընտրութեանց արդիւնքը կը միանայ: Ասով, Բիւզանդեան երեսփոխան մը՝ օրինակի համար՝ 3000 ընտրողաց կողմէն՝ եթէ 1000ը կամ 1400ը չը մասնակցի, գոնէ 1500 կամ առ նըւազն 750 քուէով կ'ընտրվի: Արդ չափեցէք հիմա էֆէնտիններ 30 կամ 300 քուէի վրայ հիմնեալ չէնքի մը հաստատութիւնը 3000 քուէի վրայ հիմնեալին հետ. կշռեցէք 30 քուէին արժէքն ու 3000 քուէին ընծայած յարգն ու պատկառանաց ծանրութիւնը. ասի անոր հարիւրապատիկն է: Հոս է անա ազգային երեսփոխանաց եւ ազգային ժողովի մը պատ-

ւարժանութեան արդար եւ պաշտօնական աստիճանն ու օրինաւոր իշխանութեան չափը :

Այս առաջարկեալ դրութիւնը՝ որ արդէն մեր Սահմանադրութեան դէմ ալ չ'է, վասն զի անբաւական թաղերու համար թէ ընտրութեան եւ թէ մատակարարութեան մասին միացման սկզբունքն ընդունած է, երկրորդ բարեմասնութիւն մ'ալ ունի՝ զոր յօգուտ կը վարէ այսօր մէկ ազգ մը իր նոր շինած Սահմանադրութեան մէջ. այն է՝ Ազգային ժողովին մասնակի վերանորոգման բնական ու գործնական դիւրութիւնը : Փոխանակ վիճակաւ որոշելու թէ որ երեսփոխանք պիտի լուծվին երկու տարին անգամ մը. բաւական է թրւական կարգով համրել Պոլիսէն սկսելով առաջին, երկրորդ, երրորդ եւ զաւանդները չորրորդ շրջանակ նկատել այս մասին. եւ երկու տարին անգամ մը կարգն եկած շրջանակը լուծել :

Նախաձեռնութեան դիւանը՝ էֆէնտիներ, երեսփոխանաց ընտրութեան եղանակին վերաբերեալ կետ մ'ալ կը զիտէ Սահմանադրութեան մէջ զոր բարեփոխութեան կարօտ կը կարծէ, այն է՝ եկեղեցական երեսփոխանաց ընտրութիւնը սոսկ եկեղեցականաց կողմէն ըլլալը :

Ասի ժամանակաւ եղած է կրօնական նախապաշարմանց պահանջմամբը, կարծելով թէ աշխարհականին յանդգնութիւն է եկեղեցականի մ'արժանիքը դատել, եկեղեցականին նըւաստութիւն է աշխարհականին քրէէն անցնելով բարձրանալ. մինչդեռ ընդհակառակը՝ եկեղեցականին պատիւ է ժողովուրդին համարումն ստանալ զի անոր պաշտօնեայն է. ոչ միայն կաթողիկոս, պատրիարք, առաջնորդ՝ աշխարհականին քրէէովը կ'ընտրովին, այլ եկեղեցական սահմանադրութիւնն իսկ՝ ձեռնադրութեանց ատեն՝ ժողովուրդին վկայութիւնը կը պահանջէ ընծայեալին արժանեացը վրայ : Բայ ասկէ՝ ազգային երեսփոխանաց համազօր իշխանութեան սկզբունքն ալ կը պահանջէ որ ատենք ալ միւս երեսփոխանաց հաւասար մի եւ նոյն ազդիւրէ ստանան իշխանութիւննին, որովհետեւ պաշտօննին մէկ է եւ քրէէնին հաւասար : Մինք կը ցանկանք հաւատալ թէ եկեղեցականաց սրտէն կը խօսինք այս մասին, եւ կը յուսանք տեսնել թէ ժողովուրդին համարումն ստանալու եւ անոր քրէէն վաստակելու նախաձեռնողիք՝ եկեղեցական հարք ինքնաբերապէս կը թեւակոխեն այդ պատիւն. եւ

թէ՝ եթէ ըլլայ իսկ աշխարհականաց կողմէն ընդդիմութիւն, գոնէ բոլոր եկեղեցական երեսփոխանք թեր կը կանգնին այս առաջարկութեան :

(ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.— Ընդհակառակն : Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ.— Մեք արդէն ընտրեալ եմք ժողովրդէն) :

Վերոյիշեալ բոլոր պատճառաբանութիւնները նկատելով, երեսփոխանաց բաշխման եւ ընտրութեան եղանակին վրայ իր կարծիքը սա հետեւեալ յօդուածին մէջ կ'ամփոփէ Նախաձեռնութեան Դիւանը :

Պետ. Ազգային երեսփոխանք 4 մասի կամ ընտրական շրջանակի վրայ կը բաժնովին՝ 1՝ Բիւզանդեանք 40 հոգի որոց 10 ը եկեղեցական եւ 30 ը աշխարհական. 2՝ Եւրոպական Վոսթրեանք 30 հոգի որոց 5 ը եկեղեցական եւ 25 ը աշխարհական. 3՝ Ասիական վոսթրեանք 30 հոգի որոց 5 ը եկեղեցական եւ 25 ը աշխարհական. 4՝ Գաւառականք՝ 40 հոգի աշխարհական :

Սոյն դասակարգութեամբ երկու տարին անգամ մը շրջանակին մէկը կը լուծվի եւ անմիջապէս կը վերանորոգվի :

Բիւզանդեան եւ վոսթրեան շրջանակաց համար ընտրութիւնները կ'ըլլան իւրաքանչիւրին թաղերուն մէջ քրէէարկութեամբ մէկ ցանկի վրայ եւ քրէէից արդիւնքն միանալով իսկ զաւառաց համար իւրաքանչիւրն առանձին իր Գաւառական ժողովին մէջ կ'ընտրէ իր երեսփոխանը :

Ահա ասոնք են վերաքննութեան խիտ կարեւոր այն երկու կետերը որոց վրայ Նախաձեռնութեան Դիւանը ժողովին յանձնաձեռք կը հրաւիրէ, եւ կը հաւատայ թէ՝ եթէ այս կետերը արժանաւոր կերպով մը չը բարեկարգէ ժողովը, վերաքննական այս ազգայնոյ մեծ գործողութեան արդիւնքը սնտի բան մը կ'ըլլայ եւ չ'արժեր ամենեւին ժողովին կրած ծնունդաբերական այս տաժանելի իննամեայ երկունքը :

Ըստ մեզ կան ասոնցմէ զատ քանի մ'երկրորդական կետեր ալ որք իբրեւ բնական հետեւանք առջիններուն ունին սակայն իրենց կարեւորութիւնը Սահմանադրութեան եւ ազգային գործոց ընթացքին կանոնաւորութեանը համար :

Ասոնցմէ մ'կը՝ համարատուութեանց տա-

րեկան ըլլալն է զոր կ'առաջարկէ իրաւամբ նաեւ Վերաքննիչ յանձնախումբը. բայց իբրեւ ասոր հետեւանք՝ Ազգային ժողովը պէտք է որ տարին անգամ մը բացվի թէ այս համարատուութիւնը քննելու եւ թէ տարեկան պիւճէն սահմանելու համար : Երկրորդը՝ վարչական մարմնոց Խորհուրդ անունը տալ՝ փոխանակ զանոնք Ժողով կոչելու, որպէս զի ասով պաշտօններու տարբերութիւնն ալ զգալի ըլլայ իրենց յատուկ եւ բնական յորջորջմամբը :

Ուստի Վերաքննիչ յանձնախումբին ծրագրին ընդհանրութեանը վրայ ըստանդակելով իր կարծիքը սա չորս կետերուն մէջ

1. Թաղային ժողովոց հաստատութիւն.
2. Երեսփոխանաց բաշխման եւ ընտրութեան եղանակին բարեփոխութիւն.
3. Համարատուութիւնք տարեկան, նոյնպէս եւ Ազգային ժողովին բացումը.
4. Վարչական մարմնոց պաշտօնապէս Խորհուրդ անուամբ յորջորջումը :

Նախաձեռնութեան Դիւանը կ'եզրակայէ սոյն չորս կետերն ալ յաւելուլ վերաքննելի կետերուն կարգը եւ այսպէս ուշադրութեան առնուլ յանձնախումբին ծրագիրը ընդհանուր վիճաբանութեան մէջ, վերապահելով մասնաւոր գիտողութիւններն ու յաւելուածական տրամադրութիւնները յօդուածոց վիճաբանութեան ժամանակին. վիճաբանութիւն յորում առաջնութիւն ունին ըստ կանոնի Նախաքննիչ դիւանիս առաջարկած կետերը :

21 մարտ 1873 Տեղեկութիւն ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ռուսինեան էֆ. նոր տեղեկագիր մը կը բերէ, հակառակ իւր ի սկզբան ըսած խօսքերուն, որուն համար հաճութիւն չունի դիւանը, եւ ստորագրած ալ չէ :

ՄՏՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ռուսինեան էֆէնտիին կարդացածը՝ փոխանակ Դիւանին տեղեկագիրն ամբողջացունելու՝ նոր տեղեկագիր մ'է իւր կողմէ բերուած. բայց յանուն Նախաձեռնութեան դիւանին խօսած է, եւ իբրեւ տեղեկագիր ինքն ստորագրած. ասկէ շփոթութիւն կը ծագի :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՅ.— Կարծեմ ամեն մարդ զիտէ որ տեղեկագիր մը միայն տեղեկագրերը կ'ստորագրէ. ով որ Եւրոպայի մէջ դիւաննե-

րուն տեղեկագրերը կարդացեր է, կտեսնէ որ տեղեկագրերը միայն կ'ստորագրէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.— Մեր ժողովին կանոնադրութեան մէջ այնպէս չէ, Մինչեւ ցարդ Նախաքննութեան դիւաններէն եկած տեղեկագիրը՝ բոլոր անգամոց կամ մեծագոյն մասին կողմանէ ստորագրեալ են :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՅ.— Մեր կանոնադրութիւնն իւր ոչ մէկ յօդուածին մէջ չըսէր թէ Նախաքննիչ դիւանի անդամոց ամենն ալ կրստորագրեն. ով որ Եւրոպայի տեղեկագիրներն աչքէ անցունէ, պիտի տեսնէ անոնց մէջ միայն տեղեկագրերն ստորագրութիւնը. ըսել չէ այս թէ միւս անդամները գիտողութիւն չեն կրնար ընել, այո՛ կրնան ընել : Մեր Նախաձեռնութեան դիւանն երեք անդամներէ բաղկացեալ է, երկուքը հոս ներկայ են. երրորդը միայն ներկայ չէ. Ատենապետ փաշան վկայ կը բռնեմ, ինք հարցուց մեր բացակայ անգամակցին. թո՛ղ յայտնէ նորա ըսածը :

ՄՏՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Այո՛, հարցուցի Պատնասեան էֆէնտիին, եւ պատասխան տուաւ թէ ինք համաձայն է Ռուսինեան էֆէնտիի այս տեղեկագրին. բայց ըսի իրեն թէ միւս տեղեկագիրն ալ ստորագրած էք, այո՛, ստորագրած եմ ըսաւ : Ասի քիչ մը հակասական է չգիտեմ թէ Պատնասեան էֆէնտիին ինչպէս պիտի ուղղէ այս հակասութիւնը. սակայն երբ Ռուսինեան էֆէնտիին ալ հարցուցի, ըսաւ թէ հակասութիւն չկայ, այս տեղեկագիրն առաջնոյն ընդարձակութիւնն է. եւ ըստ որում մեզ համար՝ Ռուսինեան էֆէնտիին գրածները մեծ արժէք ունին, անոր համար ըսի թէ կրնան նա յանուն իւր միայն ներկայել տեղեկագիրը. ես կը ցաւիմ թէ նա յանուն մեծամասնութեան դիւանի գրած է զայն, որուն միւս տեղեկագիրը արդէն վիճաբանութեան տակ ալ ինկած է եղեր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.— Երկու խօսքով պիտի պատասխանեմ Ռուսինեան էֆէնտիին : Ռուսինեան էֆէնտի հիմակուան կարդացածը՝ ուղեց որ մեզի ստորագրել տայ. բայց չ'աջողեցաւ. եւ եւ Պատնասեան էֆէնտի չ'ստորագրեցինք, եւ իւր ձեռքէն ազատելու համար գնաւ ըսինք : Ինչ որ կուզես, խօսէ ժողովին մէջ :

Ատենապետ փաշան ժամն հասած ըլլալով, Ատենապետ փաշան դադարեցոյց վիճաբանու-

թիւնը. եւ յաջորդ նիստը 15 օրէն գումարել որոշուեցաւ: Իսկ Օրակարգին համար Ատենապետ փաշան առաջարկեց որ « փոփոխելի տրամադրութիւնք Սահմանադրութեան » խնդիրը « Սահմանադրութեան վերաքննութիւն » անուամբ Օրակարգին դրուին անցնի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Ժողովով ընդունուած է. « փոփոխելի տրամադրութիւնք Սահմանադրութեան. — Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրարագիրը » անունը. Օրակարգին մէջ այնպէս նշանակել պէտք է:

Ատենապետ փաշան տրամադրուեցաւ իւր առաջարկութիւնը քուէի դնելու:

Փափաղեան եւ Խօճասարեան էֆէնտիները ձայնակցաբար բողոք բարձին, ըսելով թէ արդէն՝ էֆէնտիները որոշուած Սահմանադրութեան վերակոչմամբ ընդունուած է խնդիրը:

Այս միջոցին փոխադարձ բողոքներ լսուեցան Փափաղեան եւ Խօճասարեան էֆէնտիներուն դէմ, որով աղմուկ ինկաւ ժողովին մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Փափաղեան էֆէնտի, ինչ տարբերութիւն կայ այս երկուքին մէջ, որոյ համար կը բողոքէք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Ուրեմն ինչո՞ւ կը փոխէք, եթէ տարբերութիւն չկայ. մանա-

ւանդ թէ այդ փոփոխութեան տարբերութիւնը բացատրելու համար պէտք է խօսիմ, սակայն ժամանակն անցած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Բայց ես քուէի պիտի դնեմ, մեծագոյն մասին որոշումն առնելու համար:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Քուէի ժամանակն անցաւ, արդէն ժամն տասն անցած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Հոգ չէ, քանի հոգի ալ մնայ, Օրակարգը կրնայ որոշուիլ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Բայց Օրակարգը խնդրոց կարգի տոմարէն հանելով՝ կրնաք սահմանել:

Վերջապէս քուէի դրուելով, Վերջանալիս Սահմանադրութեան անունն ընդունուած է, եւ այս եղաւ Օրակարգ առաջիկայ նստին:

Ատենադ գոցուեցաւ ժամը 10 քաւորդ անցնելէ ետեւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԱՏԵՆԱՊԵՏ
Ն. Ս. ԱՆՍԱԶԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Արքեպիսկ. Նարպէյ	ԱՏԵՆԱՊԵՏ
2. Տ. Ներսէս	Վ. Ասլանեան	ԱՏԵՆԱՊԵՏ
3. Տ. Ամբրոսիոս	» Իսկէնտէրեան	
4. Տ. Գէորգ	» Կերձակեան	
5. Տ. Զաքարիա	» Զլամբիթեան	
6. Տ. Խորէն	» Կիւրոյեան	
7. Տ. Կարապետ	» Սերոբեան	
8. Տ. Յովնաննէս	» Փափաղեան	
9. Տ. Արիստակէս	Բ. Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	» Արամեան	
11. Տ. Գրիգոր	» Աճէմեան	
12. Տ. Երեմիա	» Խասգիւղի	
13. Տ. Սուքիաս	» Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդաննէս	» Միջազիւղի	

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՏԵՆԱՊԵՏ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ԱՏԵՆԱՊԵՏ
3. Արրահամ	Հարենց	»	
4. Ասափա	Իկիտպաշեան	»	
5. Խաչիկ	Ալեանաքեան	»	
6. Կարապետ	Փափաղեան	»	
7. Մկրտիչ	Իսաեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գափամանեան	»	
10. Սարգիս	Արրահամեան	»	
11. Սարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
13. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Խնդիրեան	»	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՄԵՓԱՊԱՆԱՐԻՔԻՆ ԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՄՆՅՈՒԿՈՂ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ԹԱՏՎԱՅԵԱՆ

Կը ճախուշի ի Դիւանաւան Պատրիարքարանի , և Ղարաբիոյ Ս.
Լուսաւորի: Եկեղեցւոյ բանկայր և Հայ գրաւիձաւորաց քով .